



ՄԵԺ ՆԵՐՍԷԿՈ¹⁾

1. ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋ



Ներսէս Պարթև, որ և իրաւամբ ՄԵԺ մականունով ճանչյուած է, ազգալին եկեղեցական պատմութեան մեծ անձնաւորութիւններէն մին է, և իւր պատմութիւնն ալ կարևոր դիպուածներով և քննադատական տեսութիւններով հարուստ է: Արդէն ըսինք թէ Աթանագինէի և Բամբիշի որդին է, հօրը պատմութիւնն ու եղերական մահն ալ լիշատակեցինք. մալրը կաթողիկոսական ընտրութեան իւր կենդանի կը լիշուի (Բուգ. 69), այլ անկէ ետքը տեղեկութիւն չունինք:

Ներսէս ծնած պէտք է լինի 327-ին, իւր հօր 17 տարեկան եղած ատեն՝ հաւանական հաշուով: Ներսէս ազգական էր թագաւորին, վասն զի մէկ կողմանէ իւր մամը Տիրանի աղջիկ, և միւս կողմանէ իւր մալրը Տիրանի քուր կը կոչուին (Բուգ. 10. 44), թէպէտև դըժուար լինի երկու ազգակցական յարաբերութիւնները միանգամայն արդարացնել: Խորենացին և Ներսէսի վա-

¹⁾ Շար. Զորբորդ դարու Հալ եկ. օդ. «Լումար» 1901 Ա.
ԼՈՒՄԱՐ

բուց պատմիչը. զոր ոմանք Ս. Մեսրովպը կարծեցին, այլ աւելի Մեսրոպ երէցը պէտք է կարծել, ալդ կէտք բնաւ չեն լիշեր, և անհնար կը լինի Բուզանդի ըսածները լուսաբանել:

Ներսէս ի տղալութենէ բարեմոյն և բարեսէր տղալ մը եղած է (Բուզ. 69), և ըստ ցեղական սովորութեան կանուխ ամուսնացած Մամիկոնեանց նահապետ Վարդանի՝ Սանդուխտ դստեր հետո Վարդան ըստ պատմութեան որդի է Արտաւագդայ և թոռն Վաչէի (Վարք 14):

Պատմիչը համաձայն են հաստատել թէ Ներսէս Կապադովիկիոյ Կեսարիա քաղաքին մէջ ուսմանց հետեւցաւ (Բուզ. 69, Խոր. 34): Ալլ նշանաւոր է վարուց պատմչին ըսածը թէ՛ «Ուսաւ ի Կեսարիացւոց գաւառին ամուսնաւն իւրօվ» (Վարք 14): Գեղեցիկ է ապաքէն մանկամարդ հարսին իւր նորատի փեսալի հետ ուսման և կրթութեան մէջ զարգանալու փափազն ու աշխատութիւնը:

Բայց՝ խեղճ Սանդուխտ չկրցաւ իւր աշխատութեան օգուտը վայելել: Աշխարհի լուսոյն պարզեց մի լուսաւոր մանկիկ, Սահակ Պարթեր, ինչպէս կը տեսնուի, նոյն իսկ Կեսարիոյ մէջ, և ինքն ալ նոյն քաղաքի մէջ վախճանեցաւ, հարսնութեան երրորդ տարին, և իւր հալրը Վարդան Մամիկոնեան անձամբ Կեսարիա եկաւ և փոխագրեց վաղամեռիկ դստեր մարմինը, Լուսաւորչեան տոհմին երկրորդ դամբարանը, ի թիլ Եկեղեց, ուր թաղուած էր Արիստակէս հալրապետը:

Երբ Յուսիկ վախճանեցաւ 348-ին Ներսէս Կեսարիա էր, և երբ Արշակ թագաւորեց 350-ին, Ներսէս անցած էր Կոստանդնուպոլիս: Ըստ Խորենացւոյ Ներսէսի ալդ վերջին ուղևորութեան նպատակն էր «առնուլ կին զգուստը Ասպինալ ուրումն իշխանի մեծի» (Խոր. 34):

Այս տողը շատ ենթադրութեանց առիթ տուած է: Ո-
մանք, Խորենացւոյն ընծալելով բոլոր հեղինակութիւնը,
մերժեցին Սանդուխտի ամուսնութիւնը և միայն յոն
կին մը տուին ներսէսի, և անոր զաւակ ըրին Սահա-
կը: Ալլք Սանդուխտը և բիւզանդացի օրիորդը նոյնա-
ցուցին, և Բիւզանդիալէ հալագգի օրիորդ մը կին ըրին
ներսէսի: Ալլք ևս ներսէսը ալրիանալէ ետքը երկրորդ
ամուսնութեան մտած ենթադրեցին:

Մեք կը գիտեմք թէ պատմիչներէն և ոչ մին ներ-
սէսի երկրորդ ամուսնութիւնը կընդունի: Վարուց պատ-
միչը կրկին անգամ Սանդուխտի մահը լիշելով (Վարք
14. 19), ալրիութեամբ կը թողու ներսէսը, և Բու-
զանդ՝ «Եալ էր ամուսնաւոր» խօսքերով (Բուզ. 69)
ալրի մնացած լինելը կակնարկէ: Եթէ ալրիութենէ յե-
տոյ կրկին ամուսնացած լինէր, ըստ կանոնաց՝ եկեղե-
ցականութեան ալ անյարմար եղած կըլլար. հետեա-
պէս ըստ մեզ պէտք է ընդունել Սանդխտոյ հետ ա-
մուսնանալը և կանուխ ալրիանալը. իսկ Ասպիոն իշխա-
նի տղջկան լիշատակութիւնը պարզապէս շփոթութիւն
մը կը կարծեմք. և ահա թէ ինչպէս:

Արշակի թագաւորելը Յունաց միջամտութեամբ ե-
ղած էր, և Կոստանդ կայսր Հայոց թագաւորին հետ
բարեկամութիւնը աւելի ամրացնելու համար ուզեց յոյն
թագուհի մըն ալ տալ Հայերուն. մինչ միւս կողմանէ
յարմար հարսնացու մըն ալ պատրաստ էր: Կոստաս
կայսր՝ Կոստանդի եղայրը իրեն կնութեան պիտի առ-
նէր Ապլաւիս իշխանի մը աղջիկը, Ողոմպիադա անուն,
երբ չամուսնացած Կոստաս կը մեռնէր նոյն տարին,
և կայսրուհի լինելու սահմանեալ աղջիկը հնար չէր
ալլ ևս հասարակ մարդու մը տալ: Այդ Ողոմպիադան
է որ Արշակի կին եղաւ ինչպէս մեր պատմիչներէն
զատ (Խոր. 46, Բուզ. 126, Վարք 50), Ամմիանոս ալ

կըսէ (Ամմ. 140), և Ս. Աթանաս ալ Կոստանդը կը մեղադրէ որ Կոստասի խօսեցեալը Բարբարոսաց ալսինքն յոյն չեղողներու տուաւ (Գաթըըճեան. Բ. 490)։

Մեր պատմագիրներ Ողոմպիտագալի ամուսնութիւնը կը յետաձգեն. ալլ նկատելով Կոստանդալ և Արշակալ բարեկամութեան սկիզբը, նկատելով Կոստասալ մահուան թուականը, նկատելով Արշակալ ամուսնութեան յարմար պարագալն, հարկ է ըսել թէ ալդ ամուսնութիւնը կատարուեցաւ 350-ին կամ 351-ին սկիզբը։ Խորենացին կընդունի թէ Ներսէս անձամբ «վոյս մի անուն Ողոմպիտագա յազգէ կալսեր, կին ածէ Արշակալ» (Խոր. 46), իսկ հարսնածութեան պաշտօնը Ներսէս կաթողիկոսէ աւելի Ներսէս պալատականի կը յարմարի. և որովհետեւ Ներսէս Կոստանդնուպոլիս կը գտնուէր, թագաւորին մօտիկ ազգականն էր, և պալատական անձ էր, շատ յարմար էր որ ինքն ընկերանար Արշակալ հարսնացուին։ Ալսպէս Ներսէս ոչ Ասպիոն՝ ալլ Ասլաւիս իշխանին Ողոմպիտագա աղջիկը կին բերաւ Բիւզանդիոնէ, ոչ իրեն՝ ալլ Արշակին, և ալսպէս կը լուծուի մեր վերը ակնարկած շփոթութիւնը Ներսէսի ամուսնութեան վրալ։

Արշակալ ամուսնութեան համար ալ կը դիտեմք անցողաբար, թէ Արշակ գոնէ 45 տարեկան պէտք էր ըլլար ալդ ատեն, և ենթագրելի չէ որ մինչև այն առեն ամուրի մնացած լինի։ Հարկաւ արքալորդիութեան ատեն ալ ամուսնացած էր, և ըստ մեզ Արշակի ալդ առաջին ամուսնութենէ սերտծ թոռներ են Վարագդատ և Խոսրով և Վուամշապուհ, որք իրեն բնիկ թագաժառանգներ թագաւորութեան կը կոչուին յետոյ, առանց իրենց հալրերը իշշուելու և ազգաբանութիւննին բացատրուելու։ Հաւանաբար Արշակալ առաջին ամուսինը մեռած էր, գուցէ քաղաքական նկա-

տումով կնաթողութիւն ալ գործուեցաւ՝ որ բոլորովին հեռու չէր ժամանակին խառնակ սովորութիւններէն, այլ լաւագոյն է Արշակը ալրի ենթադրել, քանի որ պատմութիւնը հակառակը չցուցներ: Ողոմալիադա իբրև թագուհի եկաւ ' Ողոմալիադալի զաւակ պէտք է ընդունել Պապը, որ հարկաւ լոյն մօր զաւակ լինելուն համար Յոլներէն նախադասուեցաւ, և Արշակի ուրիշ զաւակներէն առաջ թագաւոր հռչակուեցաւ յետոյ Յոլներու ձեռքով:

Ներսէսի գործերուն գտանուով, նա Բիւզանդիոնէ դարձաւ 350-ին 23 տարեկան եղած ատեն և անմիջապէս Արշակի պալատական ծառալութեան մտաւ իբրև «սիրելի սենեկապետ և հաւատարիմ ի վերայ ամենալին կարգաց կենաց թագաւորութեան» (Բուզ. 69), որով Ներսէսի պաշտօնը մտերմութեան և վստահութեան առաւելութիւն ունեցող գիրք մը կը լինի:

2. ԿԱԹՈՒՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ

Ներսէս այդ պաշտօնին մէջ էր երբ 352-ին վախճանեցաւ Փառէն կաթողիկոս, և եթէ Փառէնի ընտրութեան ատեն ալ Ներսէսի վրայ խորհուած էր (Խոր. 34), հարկաւ նոյն միտքը պիտի զօրանար Փառէնի մահուան ետքը, մանաւանդ որ ամեն "ք կը վկայէր թէ երիտասարդ ալրի պալատականը, իւր այդ փափուկ գիրքին մէջ ալ հոգեւոր և անարատ և ամենալիւ կատարեալ յամենալնի» (Բուզ. 70) կեանք մը ունէր: Սակայն Ներսէսի գժկամակութիւնը առիթ տուաւ Շահակի Տեղապահութեան, ինչպէս որ Փառէնի պատմութեան մէջ լիշուեցաւ:

Տեղապահութիւնը երկարեցաւ, եկեղեցական կարգեր սկսան թուլնալ, և ամենուն միտքը միշտ իրեն

սիրած գաղափարին կը դառնար, այն է Նուսաւորչի արիմէն հալրապետ մը ունենալ, որ պիտի լինէր ամեն չարեաց գարմանը: Նոյն իսկ աւագանին կը կարծէր, թէ որովհետև Արշակունեաց թագաւորական տունը ամեն վտանգներէ ազատուելով ժառանգած էր արքունական գահը, պէտք էր որ նոյն տան կաթողիկոսական ճիւղն ալ հալրապետական աթոռին վրայ բարձրանար (Բուզ. 69, Վարք 18): Հասարակաց այդ բարձանքին դիմաց միակ ներսէն էր որ կը հակառակէր, և կրցաւ պնդել մինչև որ վերջնական և լրացեալ գործով մը իւր ընդդիմութիւնը վերջացաւ, և 27 տարեկան երիտասարդ պալատականը կաթողիկոս եղաւ:

Մեծահանդէս ցուցման մը կերպարանով պատմուած է գործը: Թագաւորը իւր գահուից վրայ, նախարարներ և պալատականներ աթոռին շուրջը շքեղ հանդերձանոք, եկեղեցականներն ալ ներկայ և ժողովուրդը որ ամբոխիւ թագաւորին կը դիմէ և բարձրածալն աղաղակներով ներսէսի կաթողիկոսանալը կը պահանջէ: Ներսէս ալ այն տեղ է իւր պաշտօնին բերմամբ՝ տրքունական սուրն ու կամարը բոնած: Ընդհանուր պահանջին դէմ միայն ներսէսի հակառակող ձայնը կը լսուի. նախ կը մերժէ, լետոյ իւր անարժանութիւնը կը պատմէ, լետոյ ժողովուրդը յանդիմաննել կը սկսի, լետոյ ապագայ խստութեանց սպառնալիքներ կընէ, իսկ ժողովուրդը և ոչ մէկին կարեսորութիւն կուտալ, և կը պնդէ, մինչև որ Արշակ բացարձակ իշխանութեամբ խնդիրը կը վերջացնէ:

Ներսէսին ձեռքէն կը խլեն սուրն ու կամարը, կը մերկացնեն զինքը պալատական զարդերէն և բռնութեամբ կը խոնարհեցնեն թագաւորին առջև, գանգրագեղ մազերը կը խուզեն, կղերիկոսական պարեգօտ կը հազցնեն, և ծերունի Փաւստոս եպիսկոպոս մըն ալ բե-

քելով անմիջապէս սարկաւագ ձեռնադրել կուտան (Բուզ. 69—72, Վարք 20—24): Նկատելի է մազեր խուզելու գործողութիւնը զոր ալժմ ալ կը կատարեմք մեք կղերիկոսաց վրայ, մինչ յունական սովորութեամբ կղերիկոսաց գլուխը երկաթ ելնելը արգելուած է:

Առանց այլ ևս յապաղելու ձեռնադրութեան պատրաստութիւններ կը կատարուին: Արքունական սպիտակաձիգ կառքով, 26 նոխարարաց և 13 եպիսկոպոսաց և 4000 հեծելոց ընկերակցութեամբ ներսէս Կեսարիա կը տարուի և քահանալ և եպիսկոպոս կը ձեռնադրուի: Հստ պատմչաց ձեռնադրողն է Եւսեբիոս արքեպիսկոպոս և Ս. Բարսեղ ալ ներկալ է իբր քահանալ, և հրաշալի աղտւնի մը նախ Բարսողի և յետոյ ներսէսի վրայ կը հանգչի: Սակայն Եւսեբիոս 362-ին եպիսկոպոս եղաւ և Բարսեղին քահանալութիւնը ինքը տուաւ, որով վերոլիշեալ պարագայք պատմութեամբ շեն արդարանար: Իսկ 353-ին Կեսարիու արքեպիսկոպոսն էր Դիանիոս, Եւսեբիոսի նախորդը, որ 340-է 362 նոյն աթոռուը վարեց: Ներսէս միւնոյն հանդիսութեամբ Վաղարշապատ գարձաւ և հայրապետական աթոռը բազմեցաւ:

Յ. ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆՆԵՐ

Ներսէս հազիւ թէ հայրապետական աթոռը բարձրացած, երիտասարդական եռանդով, լաւագոյն կրթութիւն առած մարդու փափագով, և բարեկարգութեան և բարեզարդութեան նախանձախնդիր զգացումով ձեռնարկեց նորանոր կարգադրութիւններ և կանոնադրութիւններ հաստատել, և իւր ըրածներն ալ ժողովական որոշմամբ ամրացնել ուզելով յատուկ ժողով մը գումարեց լԱշտիշատ ուր էր տեղի լեալ նախնեացն ժողովու սիւնհոդոսին» (Բուզ. 76): Ներսէսի ժողովը կա-

նոնագիրքին մէջ չկայ, այլ թուականը կրնալ դրուիլ
354.ին, իսկ բարեկարգական կանոնները միայն պատ-
միչներէ պիտի քաղենք:

Եկեղեցական բարեկարգութիւնք և բարեգործական
հաստատութիւնք ներսէսի անձնաւորութեան և գոր-
ծունէութեան նկարագիրը կը կազմեն, այնպէս որ կա-
րող եմք զինքը բարեկարգութեանց լուսաւորիչ անուա-
նել, ինչպէս որ Դրիգոր։ Հաւատոց լուսաւորիչ եղած-
էր, և Սահակ ալ լետոյ դպրութեանց լուսաւորիչ եղաւ:
Ներսէս իւր այդ գործունէութեան մէջ իրեն առաջ-
նորդ ունեցաւ կայսերական աշխարհին եկեղեցիներուն
և ժողովներուն օրինակները և կանոնները. «Զբարե-
կարգութիւնն զոր ետես ի Յունաց աշխարհին, մա-
նաւանդ ի թագաւորեալ քաղաքն ի սմա նկարագրէ»
(Խոր. 42): Թերևս Աշտիշատալ կանոններն ալ լոյն ժո-
ղովներու քաղուածոյն էին:

Ներսէսի բարեկարգութեանց առաջիններն բարե-
գործականներն եղան: Բորստներ, ուրուկներ և զանա-
գան վարակիչ ախտեր ունեցողներ բնակութենէ կը մեր-
ժուէին և անխնամ կը մնալին. Ներսէս ասոնց համար
ուրկանոցներ և հիւանդանոցներ հաստատեց (Խոր. 42,
Բուգ. 76, Վարք 40): Որբեր և ծերեր և չքաւորներն
ալ անխնամ էին, ներսէս իւրաքանչիւր քաղաքի կամ
գիւղի մէջ աղքատանոցներ հրամալեց կազմել (Խոր. 44):
Հիւրեր և օտարներ ապաստան չէին գտներ, անոնք ալ
աղքատանոցներու մէջ ընդունել հրամալեց (Խոր. 42):
Այս հաստատութեանց համար լատուկ գիւղեր և աղք-
ակներ ուրոշեց, և անոնց հասութներով, «պարզեանց
անդաստանաց և ի կթից արօտականաց և ի գեղմանց»
(Խոր. 44), կարօտելոց պէտքերը հոգալու կանոն գրաւ:
Զեմք գիւտեր թէ ուստի զատեց այդ հասութարեր գիւ-
ղերը, թագաւորական հրամանով, նախարարաց տուու-

չութեամբ, թէ հալրապետական առատաձեռնութեամբւ Թերևս ալդ նպատակին լատկացուց Տրդատի օրէնքով ամեն ազարակէն չորս արտ, և ամեն գիւղէ եօթը տրտ եկեղեցւոյ պէտքերուն լատկացնելու հրամանը (Ագաթ. 620): Միայն գիտեմք թէ ի հնումն կեդրոնական գանձ չկար, ուր եկամուտներ կը հաւաքուէին և կը բաշխուէին, ալլ նոյն իսկ արդեանց աղբիւրներ ուղղակի վայելողին կը լանձնուէին, ըլլար ալն իշխան կամ եպիսկոպոս, եկեղեցի կամ անկելանոց:

Բոլոր աշխարհին ընդհանուր բարեգործական հաստատութեանց վերին տեսուչ և լանձանձիչ կարգեց իւր հաւատարիմ սարկաւագը Խաղ Կարնեցին, «ի Մարգաց Կարնոլ» (Խոր. 44), կամ ի Կարին գաւառէ ի գեղջէ Մարագալ (Բուզ. 108), զոր տեղացիք ալժմեան Կանգիւղի տեղը կը կարծեն: Պաշտօնին ընդարձակութիւնը և Ներսէսի իւր վրալ դրած վստահութիւնը, Խաղի կատարեալ գովեստը կը կազմեն: Յամենալնի իրը միւս ալլ Ներսէս կը նկարագրէ զայն պատմութիւնը, ոչ միալն բարեգործական աշխատութեամբ, ալլ և եկեղեցական և վարչական հանճարով, արիասիրտ և ճգնաւորական կենօք, ինչպէս որ նորէն առիթ պիտի ունենամք լիշել:

Մինչեւ ալն ատեն միայնակեացք և վանականք և եպիսկոպոսունք քաղաքներու և գիւղերու մէջ ընտանեաց մօտ կապրէին. Ներսէս ալդ կենակցութիւնը արգելեց. բնակութիւններէ հեռու վանականաց համարեղարարանոցներ հաստատեց, և միայնակեցաց համարանապտաներ կամ խրճիթներու խումբեր կազմեց, և եպիսկոպոսաց համար եպիսկոպոսարաններ շինել տուաւ. Վանականաց և միայնակեցաց տեսուչներ որոշեց, որք եղեն Շաղիտա ասորի և Եպիփան լոյն և Գինդ Սլկունի և Եփրեմ ոմն, բոլորն ալ Ս. Դանիէլի աշակերտներէն

(Պոր. 44, Վարք 39): Վանքերու հասոլիթ ճարելու համար որոշեց որ թագաւորաց և իշխանաց և զօրավարաց գերեզմաններ վանքերու մէջ ըլլան, և փոխարէն նախարարութեանց կողմանէ գիւղեր և տգարակներ նուիրուին վանքերուն (Վարք 39):

Ամեն գաւառներու մէջ լունարէն և ասորերէն գպրութեանց համար վարժոցներ բացաւ (Բուգ. 78), քանի որ ազգակին գպրութիւն չկայր և եկեղեցական պաշտամանց մէջ ալ արդ լեզուները կը տիրէին ըստ սահմանակցութեան դրացի եկեղեցեաց: Բարձր Հայք, Արարատ և Սիւնիք լունարէն կը գործածէին, մինչ Տուրուբերան, Աղձնիք և Վասպուրական ասորերէնի կը հետեւին, և ալս ալ յայտնի կը լինի նոյն իսկ տեղեաց և անձանց պատմական լիշտակներէն: Ներսէսի դպրոցներուն աշակերտներն եղան որք հայ գպրութեանց գաղափարը լդացան և գործը կատարեցին, և որոց գըլխաւորն եղաւ Ս. Մեսրովակ, Ներսէսի ձեռնասուն աշակերտը (Վարք. 83):

Գրուած է թէ Ներսէս «նորոգէր զգահս իշխանացըն Հայոց... բարձս չորեքհարիւր» (Վարք. 32): Այդպիսի բոլորովին պալատական կարգագրութիւնն մը թերևս աւելի յարմարէր Ներսէս սենեկապետի վերագրել քան Ներսէս հալրապետի, ինչպէս կընէ վարուց պատմիչը, սակայն մենք կը կարծեմք թէ ալս 400 թիւը լրւաւորչէ հաստատուած 400 եպիսկոպոսարաններուն հետ կապ ունի (Ագաթ. 634), և Ներսէսի գործն եղած է նախարարութեանց գահնամակի ուղղութեամբ եպիսկոպոսութեանց կարգն ալ վերակազմել և պէտք եղած կարգադրութիւնները և ձեռնադրութիւններն ընել: Կարգեցան կարգք կաթողիկէ եկեղեցւոյ, բազմացան կարգք սրբութեան պաշտամանց և պաշտօնէից յաճախութիւնն (Բուգ. 77), խօսքն ալ նոյն միտքը կուտայ:

Ներսէսի բարեկարգութեանց գլխաւորներէն կը համարուին հետևեալ երկուքն ալ. այսինքն է մերձաւորաց ամուսնութեանց արգելքը, և մեռելոց վրայ ոճագործ և անպատշաճ սուգերու արգելքը (Խոր. 42): Կը լիշուի ևս «ի մեռելուող և լարենէ ուտելոյ» արգելքը (Բուզ. 77), սակայն լետագալ կանոններ այլ ևս այդ կէտը չեն շօղափեր, որ լոկ առաքելական արգելքին (Գործ. ՁԵ. 29) հետեւողութեամբ լիշուած կերեի: Այլ գեղեցիկ է գերեաց, ծառալից, աշակերտաց և կըրտսերաց հետ գումար ունենալու կանոնը (Բուզ. 77), իբր զի ի նախնումն տեսրք և ուսուցիչք և ծնողք բռնական և անգութ իշխանութիւն կը բանեցնէին իրենց ստորագասելոց վրայ:

Երբ Ներսէս ընդհանուր բարեկարգութեան ջանքով կը փալլէր, դրած օրէնքներուն պահպանութիւնը իրմէ կսկսէր. «Նախ ինքն առնելով տու իւր անձն բարի, և ապա այլոց օրինակ բարեաց գնելով», և «վասն ճշմարտութեան մինչև ի մահ մարտնչէր» (Բուզ. 75), ախտաւորները «ինքն իւրովք ձեռօքն լուանալը զամենեսեան, օծանէր, պատէր, և ինքնին իսկ ջամբէր նոց զիւրաքանչիւր կերակուրո» (Բուզ. 78), «զտիւ և զգիշեր ոչ դադարէր ի խրատելու և ի բողոքելոյ», և «զվերակացութիւնս աշխարհի ամենալն հոգաբարձութեամբ, առանց ամենալն ծուլութեան և ամենալն լապաղութեանց տանէր մինչև ի վախճան իւր, և ոչ երբէք ուրեք եղեւ նման նման այլ ոք ի Հայոսստան երկրի» (Բուզ. 80), և իւր սրբութեան արդիւնք «մեծամեծ նշանս և բժշկութիւնս առնէր հիւանդաց» (Բուզ. 74):

4. ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Ներսէսի անձին և արժանիքին համառօտ պատ-

կերը տալէ յետոյ, իւր գլխաւոր գործառնութեանց պիտի անցնիմք, այլ ժամանակագրութիւնը մեծ արգելք մը կը յարուցանէ, թէ իւր պաշտօնավարութեան տևողութիւնը որոշելու և թէ պատահարները շարադասելու: Ներսէսի հալրապետութեան տեղութիւնը 34 տարի դրած է Խորենացին (Խոր. 92), և այս թիւը կրկնուած է ամեն հիներէ, բաց յօրբելեանէ որ 20 տարի կուտայ (Օրբ. Բ. 249), Վարուց պատմիչը թէպէտ ի վերջոյ 34 տարի ըստած է (Վարք. 115), սակայն յընթացս պատմութեան անգամ մը 25 տարի կուտայ նորա գործունէութեան (Վարք 41), առանց այդ տարբեր թիւերը բացատրելու, թերևս աքսորանաց ենթադրեալ 9 տարիները գործունէութենէ կը զեղչէ:

Երբ մի կողմանէ ներսէսի 34 տարի հալրապետութիւն կենթագրուի, միւս կողմանէ ալ Արշակի 30 տարի թագաւորութիւն կը տրուի (Խոր. 82), որ նոյնպէս գժուարութեան կը հանդիպի: Այդ թիւերու հիմք այն է թէ Պապ սպանուած է Թէսդոսի 20-րդ տարին (Խոր. 96), մինչ իրօք Թէոդոս 16 տարի միայն թագաւորած է, և Պապի սպանութիւնն էլ ժամանակակից Ամմիանոսի վկալութեամբ եղած է Վաղէսի 11-րդ տարին: Վաղէսի մնացեալ 4 տարիները և Թէոդոսի տրուած 20 տարիները, 24 տարւոյ սխալ կը կազմեն Խորենացւոյ ժամանակագրութեան մէջ, որ կշիռ կերպով կը տեսնուի թէ թագաւորաց և թէ կաթողիկոսաց տարիներու վրայ, և ուղղութեանց մէջ յանձնարարելի է այդ կըսը չկորսնցնել, ինչպէս Ս. Յուսիկի պատմութեան մէջ ալ լիշեցինք:

Լուսաւորչալ 30 տարին 25-ի, և Վ. թանէսի 15 տարին 8-ի իշեցնելով միաւն 12 տարի զեղչած կըլլամք կաթողիկոսաց գաւազանէն, և մնացեալն ալ անհրաժեշտ է զեղչել ներսէսի և Արշակի տրուած տարին երէն և

ալդպէս կընեն ամեն նոր հետախոզներ։ Թագաւորաց գտաւազանին մէջ առաջին 12 տարիները կուղղուին Տըրդատաւ տարիները կանուխ սկսելով, իսկ վերջին մասը Արշակէ և Ներսէսէ զեղչելու պատճառը՝ նախնաբար անոնց պաշտօնավարութեան անարդարանալի երկարատեւութիւնն է, և երկրորդաբար ժամանակակից դէպքերու հետ եղած կապակցութիւնն է։

Մեր կազմելիք ժամանակագրութեան հիմը Պապայ մահն է Վաղէսի 11-րդ տարին, որ է ըսել 374-ին, և Արշակալ գերութիւնն 368-ին, ըստ պատմելոյ Ամմիանոսի (Ամմ. 328 և 282). իսկ Ներսէսի մահն ալ Պապալ սպանութիւնէն քիչ յառաջ լինելով պէտք է դնել 373-ին։ Պաշտօնավարութեանց սկզբնաւորութիւնները, հնարաւոր յարմարութիւններով և երբեմն ալ ցուցուած տարիները՝ լոկ սկսած և ոչ աւարտած տարիներ հաշուելով, հաստատեցինք արդէն, Արշակալ ժամանակելը 350-ին և Ներսէսի կաթողիկոսանալը 353-ին, պահելով Խորենացւոյ Կշիռը թէ Ներսէս կաթողիկոս եղաւ Արշակի 3-րդ տարին (Խոր. 42)։ Ըստ ալսմ Արշակ 350-է 368 իբր 18 տարի ժամանակութիւն կունենալ, իսկ Ներսէս 353-է 373 իբր 20 տարի հայրապետութիւն ըրած կըլլալ համաձայն Օրբելեանի ցուցակին։

Դրացի մեծ տէրութեանց վեհապետներուն հետքաղդատուելով, Արշակ կսկսի Կոստանդի 11-րդ տարին, կը լրացնէ նորա 24 տարիները, Յուլիանոսի 2 և Յովիանոսի 1 տարիները և կը դադարի Վաղէսի 5-րդ տարին։ Իսկ Ներսէս կսկսի Կոստանդի 17-րդ տարին, կը լրացնէ Կոստանդի 24, Յուլիանոսի 2 և Յովիանոսի 1 տարիները, և կը վախճանի Վաղէսի 11-րդ տարին։ Իսկ Պարսից գահուն վրայ կը դանեմք միշտ Շապուհը, որ 309-ին ծնած օրը ժամանակած լինելով

մինչև 379 թագաւորեց, և ժամանակակից եղաւ մինչև հիմայ յիշուած թագաւորաց և կաթողիկոսաց։ Ալդըաղդատական հաշիւները օգտակար են լառաջ բերուելիք պատմական դիպուածոց տարիները որոշելու և կարգը հաստատելու համար։

5. ԳՆԵԼ ԵՒ ՓԱՌԱՆՁԵՄ

Ներսէսի հայրապետութեան գործունէութեան առաջին տարիները կանցնին բոլորովին ներքին բարեկարգութիւններով, ներսէն հանդարտութիւն և դուռսէն խաղաղութիւն կը նպաստեն ալդ աշխատութեանց կաթողիկոսի և թագաւորի մէջ ալ կատարեալ համաձանութիւն կը տիրէ, որուն նշան է պատմութեան վկայելը. թէ Արշակ կենաց առաջին մասին մէջ աստուածալին իմաստութեան հետեւղ էր, և միայն վերջին տարիներուն մէջ ուզդութենէ շեղեցաւ (Բուգ. 109)։ Մեր պատմելիք պատահարները ալլ ևս Արշակալ և Ներսէսի առաջին տարիներուն չեն պատկանիր, զի լաւ լարաբերութեանց խզումներ կոկին։

Տիրանի թագաւորութեան ժամանակէն Արշակալ Տրդատ եղբայրը և սորա որդին Գնէլ և Արտաշէս մեռած եղբօր որդին Տիրիթ պատանդ զրկուած էին Կոստանդնուպոլիս։ Տրդատ կայսեր հրամանով սպանուեցաւ քաղաքական յարաբերութեանց շփոթած ատենը։ Խորենացի Վաղենտիանոս կայսեր անունը կուտայ (Խոր. 44), ալլ պէտք է Կոստանդ ըլլայ սպաննողը, եթէ երբէք Տրդատ բնական մահուամբ մեռած չէ և սպանութիւնը կասկածով զրուցուած է, ինչ որ պատանդներուն կատմամբ շուտով կրնալ ծնիլ։ Երբ Կոստանդ և Արշակ բարեկամ եղան և Ողոմպիադա հարսնացու ղըրկուեցաւ, Գնէլ և Տիրիթ պատանդներն ալ ի միասին

արձակուեցան։ Պատմութեան մէջ ալ լիշուած է որ Ներսէս Ողոմպիադան և պատանդները ի միասին բերաւ (Խոր. 46), և ըստ մեր հաշուոյն թուականը 350-է, Ներսէսի պալատականութեան ատեն։

Գնէլ կալսրէն հիւպատոսութեան աստիճան առած էր (Խոր. 46), և իւր արժանեօք ամենուն սիրելի էր, յաջող ամուսնութիւն ալ ունեցաւ Սիւնեաց Անդովկ կամ Անդիոք նախարարին Փառանձեմ աղջկան հետ, որ բնական և բարուական ձիրքերով հայ օրիորդներուն առաջինը նկատուած էր։ Գնէլ կալսերական պալատան մէջ բարձր կըթութիւն առած լինելուն, գլխաւոր նախարարք իրենց զաւակները Գնէլի մօտ դրին զարդու և զինուա հանդերձանքը անկէ սորվելու համար։ Բայց Գնէլ նախանձու առարկալ դարձաւ, մանաւանդ իւր հօրեղբօրորդուոյն Տիրիթին, որ շարունակ քսութիւններով Արշակալ կասկածները գրգռեց։ Գնէլ իւր կուրացեալ պապուն Տիրանի մօտ կը բնակէր ի Կուտշ, Ալրարատ նահանգին մէջ։ անոր համար Արշակ Տիրանի վրայ ալ սկսաւ կասկածել։ նախ Գնէլը հեռացուց լԱռերանի (ալժմ Բերկրի, Վանայ մօտ), և լետոյ Տիրանը սպաննել տուաւ ի ծածուկ, վերջապէս Գնէլն ալ դաւաճանութեամբ հրաւիրեց ի Գառնի հանդիսի պատճառվ, և նենգութեամբ սպաննել տուաւ հետևեալ պարագալից մէջ։

Նաւասարդի տարեկան տօնն էր, և այն օր Ներսէս ալ իբր հալրապետ թագաւորի մօտ էր։ Գնէլ տօնին հասնելուն պէս խարդախութեամբ կը ձերբակալուի, և Փառանձեմ որ իրեն հետ էր, անմիջապէս եկեղեցի կը վազէ որ հալրապետին լուր տալի։ Ներսէս որ եկեղեցւոյ մէջ առաւօտու ժամերգութիւնը կը կատարէր, աղօթքը կընդմիջէ և թագաւորին կերթալ, բայց Արշակ սամուլենի մուշտակին մէջ գլուխը ծած-

կած սուտ քուն կը ձեացնէ, մինչև որ Երազմակ դահճապետ Գնէլի սպաննուած լինելուն լուրը բերէ: Ներսէս կը զալրանալ, դաւաճանութիւնը կը խալտառակէ, Արշակը կը յանդիմանէ, և երկնից անէծքը կը սպառնալ նորա գլխուն, և կը հեռանալ, և այդ պարագային թագաւորի և կաթողիկոսի յարաբերութիւնք կը ցրատանան և հետզհետէ կընդհատին (Բուզ. 119—124, Վարք 43—49): Խորենացի որսի մէջ կեղծեալ դիպուածով սպաննուած կը կարծէ Գնէլը, այլ մեր պատմածը, որ Բիւզանդէ և վարուց պատմիչէն առնուած է, աւելի պատմական է:

Գնէլի սպաննութեան թուականը ճշդելու կը ծառալեն Բուզանդի սա խօսքերը «վասն զի վաղիւն հասելու առաւօտուն օրն լուսանալը կիւրակէն, և յալնմ աւուր տօն գիշեցաւ լիշտատակի Մ'եծին Յովհաննու որ ի Փրիգորէ և ի Տըդատալ յաւանին Բագաւանին կարգեալ էր» (Բուզ. 121): Արդ այս տօնը Նաւասարդի տարեմուտին տօնն էր (Ս.գաթ. 619), ինչպէս այս տեղ ալ լիշտուածէ, թէ Արշակ «ոչ կամեցեալ զտօնս Նաւասարդաց առանց քո անցուցանելը» (Բուզ. 120): Արդ այս միջոցին Նաւասարդի 1-ը կիրակի հանդիպած է 359 օգոստոս 29-ին, ինչպէս որ հայկական տոմարին ճշդուած հաշիւներով կըցուցուի: Այդ թուականը պատմական պահանջներու ալ կըհամապատասխանէ, զի մինչև Գնէլի սպաննութիւնը թագաւորի և կաթողիկոսի յարաբերութիւնք լաւ եղած են, և սպաննութենէ սկսելով խանդարուած են, զի Արշակի ընթացքն ալ կարծես կը խանդարի: Տիրանը և Գնէլը սպաննել տալէն ետքը, Տիրիթն ալ սպաննել կուտալ զգալով անոր դաւաճանութիւնը: Աւելին ալ կար. Գնէլի լուղարկաւորութեան առթիւ Արշակ կը ճանչնալ Փառանձեմը և կը հաւնի անոր. և Տիրիթը մէջտեղէն վերցնել կուզէ, երբ նա կը պատրաստուի

իւր հօրեղբօր որդւոյն ալրին իրեն կին առնուլ, Արշակ Փառանձեմը իւր արքունեաց մէջ կառնէ, բայց Փառանձեմ չհաւանիր՝ իրբև հարճ ծառալել Արշակալ հաճոլից:

Աստի կը ծագի Ողոմպիադալէ ազտտուելու խորհուրդը, և թագուհին կը սպանուի քստմնելի դաւաճանութեամբ: Արշամունեաց Գոմկունք (ալժմ Վարդովալ Գոլնուկ) գիւղէն Մըջիւնիկ անուանեալ պալտան դրան երէց մը եկեղեցւոյ մէջ թագուհին հաղորդելու ատեն «ընդ կենաց գեղոյն զգեղ մահու» կը խառնէ (Բուգ. 127), Ողոմպիադա կը մեռնի, Արշակ ալրի կը մնալ, և Փառանձեմ Արշակալ կին և Հայոց թագուհի կը լինի: Պատմութիւնն Փառանձեմը կամբաստանէ ընդհանուր առմամբ, որովհետեւ ինքն էր որ կօգտուէր, սակայն մեծ մեղադրանքը Արշակի վրայ կը ծանրանալ, վասն զի Գնէլի և Տիրիթի ապանութիւններով Փառանձեմը իւր արքունեաց մէջ կառնէր, և Փառանձեմ իւր դաւաճանութիւններէն չէր կընար օգտուիլ և տիկնութեան չէր հասներ, եթէ Արշակ չլինէր ալդ ընթագքին կարգադրողը:

Ողոմպիադալի սպանութիւնը քաղաքական նպատակի ալ պիտի ծառալէր, որովհետեւ Ողոմպիադա Յունաց կողմանէ պաշտօնապէս գրուած թագուհի մ'էր, և ալդ թագուհին պէտք էր մէշտեղէն վերցնել, երբ Արշակ սկսած էր արդէն Յոյներէն յուսը կտրել, յունասէր քաղաքականութենէ հեռանալ և պարսկասէր քաղաքականութեամբ իւր կացութիւնը ամրացնել: Արշակ անդամ մըն ալ Պարսկաստան գացեր էր Վարդան Մամիկոննանի միջնորդութեամբ և աւետարանի վրայ երդումով Շապուհին բարեկամութիւն խոստացած էր: Ալդ դիպուածը Յուլիանոսի պատերազմէն 8 տարի յառաջ տեղի ունեցած լինելով (Բուգ. 140). պէտք է դնել ՀՈՒՄԱՑ

355-ին, և որչափ ալ Ներսէսի ազգեցութեամբ լունա-
սէր քաղաքականութիւնը դեռ կը շարունակէր, սակաւն
Շապուհի և Արշակի լարաբերութիւնները սկսեր էին
լաւանալ: Վաստի Մամիկոնեան ալ Պարսից դէմ տտե-
լութեամբ և իւր եղբօր Վարդանի դէմ հակառակու-
թեամբ, յաջողած էր Արշակը լեղակարծ կերպով Պարս-
կաստանէ Հայաստան բերել, սակայն չէր կրցած բոլո-
րովին Արշակի պարսկասէր միտումները դադրեցնել, և
Արշակ 358 ին հայ գունդեր տլ լզած էր Միջագետք
իրը Շապուհի նիզակակից: Ալդ ուղղութիւնը իւր լրու-
մը կը գտնէր միւս տարի 359-ին Ողոմպիտադալի սպա-
նութեամբ, որ քստմնելի ոճրագործութիւն լինել զատ,
ուղղակի Յունաց դէմ անարգանք էր: Ներսէս հայրա-
պետ, որ յալտնապէս լունասէր քաղաքականութեան
բարեկամ էր, և պարսկասէր քաղաքականութեան բա-
ցարձակ հակառակող, կը զգար որ հնար չէր իրեն ալլ
ևս Արշակի հետ լաւ յարաբերութիւն պահել և արքու-
նեաց մէջ ազգեցութիւն գործածել: և կը պարտաւո-
րուէր հրապարակէ քաշուիւ:

6. ՆԵՐՍԷՍԻ ՔԱՇՈՒԻԼԸ

Ներսէս թէպէտ բուռն հետապնդող մէր և դը-
ժուարութիւններէ վհատող չէր, հրապարակէ քաշուիլ
կը պարտաւորուէր, որովհետև պարագաներն ալ իրեն
նպաստաւոր չէին: Եթէ ինքն լունական քաղաքակա-
նութիւն կը պաշտպանէր, շարժառիթը քրիստոնէական
ուղղափառ հաւատքն էր. դժբաղդաբար Կոստանդ իւր
մերջին տարիներուն մէջ ուղղափառները հալածող ե-
ղած էր, և Կոստանդի ալ կը յաջորդէր քրիստոնէու-
թիւնը ուրացող և հալածող Յուլիանոս մը, և Ներսէ-
սի հնար չէր այսպիսի քաղաքականութեան պաշտպան

կանգնել։ Ահա թէ ինչպէս 359-է 363 ներսէս քաղաքական գործունէութենէ ձեռնթափ լինել կը պարտաւորուէր։

Պատմութիւնը կըսէ թէ ներսէս ալլ ևս չէր գար «ի բանակն առ թագաւորն», ալսինքն է մասնակից չէր լիներ արքունական գործերու, յորս կաթողիկոսներն թէ իբր երկրին մեծամեծներէն մին, թէ իբր Պահաւունեաց կամ Պարթևեանց տան նահապետ, և թէ իբր Հոգեւոր պետ, հաստատուն և կանոնաւոր մասնակցութիւն ունէին, մանաւանդ թէ գերազանց և նոյն խկ թագաւորին ազգեցութիւնը կշուող գեր կը վարէին (Բուզ. 133), Բայց երբ քաղաքական գործերէ և արքունական յարաբերութիւններէ ձեռնթափ էր ներսէս, Հոգեւոր պաշտօնը չէր մոռնար, և կը շարունակէր «ուղղել, կարգել և հաստատել զեկեղեցիսն» (Բուզ. 114): Վարուց պատմիչը մինչև Ուռհա ալ կը տանի զներսէս (Վարք 66), և անհնար չէ որ իւր հովուական պատուները մինչև Միջագետք հասուցած և Եղեսիս ալցելած լինի։

Ալդ միջոցին է Զոնակի հակաթոռ կաթողիկոսութիւնը։ Արշակ նկատելով ներսէսի հեռանալը, արքունեաց մէջ կաթողիկոսական դիրքը դատարկ չթողլու համար, կամ թէ ներսէսի հակառակութիւն ընելու համար «զՉոնակ ոմն անուն» կաթողիկոս ընել կուտալ (Բուզ. 127): Միայն Աղձնեաց և Կորդուաց երկու եպիսկոպոսները կուգան ձեռնադրելու, կամ թէ վարուց պատմագրին համաձայն՝ Աղձնեաց և Անձևացեաց և Գառնոյ երեք եպիսկոպոսները միայն կուգան, իսկ մնացեալ եպիսկոպոսներ չեն ուղեր գործակցիլ (Բուզ. 127, Վարք 66):

Սակայն Խորենացի չունի երբէք Զոնակի անուն, յետագալ պատմագրիներ և ցուցակագիրներ ալ նորա

Հետևողութեամբ Զոնակի անուն չեն լիզեր, Նկատելի է ևս որ նոյն իսկ Բուզանդալ պատմութեան մէջ, Զոնակ անգամ մը լիշուելէ ետքը բոլորովին կանհետանալ, ոչ դործունէութիւն ունի և ոչ դեր, և երբ քիչ ետքը Ներսէս նորէն Արշակի հետ կը հաշտուի, չգիտցուիր թէ ինչ եղաւ Զոնակը, կամ թէ ինչպէս հեռացաւ կաթողիկոսութենէն: Բուզանդ Զոնակի նկարագիրն ալ տալով միանդամ կը կոչէ զնա «այր զգօն», և միւս անգամ կանուանէ աստրուկ ի աստրկաց արքունի» (Բուզ. 127), և պատճառն ալն է որ թագաւորը շարունակ չլանդիմաներ, չանիձեր, չսպառնար:

Պէտք է նկատել ևս թէ Արշակ չէր կրնար սինլքոր անձ մը հանել Ներսէսի դէմ և զայն իբր կաթողիկոս ընդունել և ընդունել տալ առանց եպիսկոպոսաց գործակցութեան. ուստի Զոնակ ըսուածը պէտք էր որ եպիսկոպոսներու մէջ դիրք և դեր վալելող մէկը ըլլար, աւելի իբր կաթողիկոսութեան տեղակալ, քան թէ բուն կաթողիկոս, և առ այս նախկին տեղապահ Շահակէ յարմար մէկը չեմք գտներ. մէկ կողմէ զգօն և միւս կողմէ յարմարող անձ մը: Մինչև իսկ պիտի ըսեմք թէ մի միայն տեղը, ուր այս անունը կը գտնուի, ՃԱԿԱԿ գրութիւնը սխալ լնթերցմամբ ԶՈՆԱԿ եղած է: Ալրիվանեցին Ներսէսի յաջորդ Շահակի անունը Զոնակ կը զրէ, և երկու անունները փոխանակելով մեր կարծիքին իրական հաստատութիւն կուտար:

Զոնակի միջադէպը նորութիւն մըն է նախընթաց պատմութեան համար, դժբաղդաբար նմաններ շատ ունի յետագալ պատմութեան մէջ, գլխաւորաբար Սահակի ժամանակ: Այս պարագայն մեղի կը հաւաստէ կաթողիկոսներու կրկնակի դերը, մին իբր հոգեւոր պետ և հոգեւորական գործերու վարիչ, և միւսը իբր երկրին աւագանւոյն գլխաւոր և քաղաքական գործերու մաս-

Ներսէս իւր քաշուելովը միայն քաղաքական գործերը լքանող եղաւ, և միայն ալս քաղաքական գործերուն համար փոխանակող մը բերուեցաւ, մինչ հոգեստրական գործերը կարող եղաւ ամբողջաբար պահելու վարել: Եպիսկոպոսաց մեծամասնութիւնը, կամ լաւ ևս ամբողջութիւնը ներսէսի նմանողութեամբ քաղաքական գործերէ ձեռնթափ մնաց, առանց իւր հոգեստր պետէն բաժնուելու և հոգեստր գործերէ քաշուելու. և միայն երկու կամ երեք եպիսկոպոսներ համակերպեցան թագաւորին կամքին և Զոնակի գործակցեցան:

Պարագաներ ալ ալնպէս և ալնչափ դժուարին էին, որ ներսէս բաղդ մը պիտի սեպէր քաղաքական գործունէութենէ հեռանալը: Ինքն ի ծնէ և ի բնէ քրիստոնեալ և յունական կոչման պաշտպան, չէր կրնար ոչ արիանոս Կոստանդի վերջին զեղծումները և ոչ հեթանոս Յուլիանոսի ընթացքը պաշտպանել, և ոչ ալ կը նար պարսկական կամ մոդական կրօնքի կողմը հակի: Արքունիքն ու նախարարութիւնը վարանոտ քաղաքականութեամբ միայն օրը օրին վտանգէ զերծ մնալու նպատակին կը ծառալիքին. և ասոր հակառակ աւելի ապահով ճանպար մը ցուցնել հնար չէր: Ներսէս ալդանինարին և անել կացութեան առջև կը քաշուի, և թող կուտալ որ ուրիշներ ընեն ինչ կրնան: Կոստանդի վերջին և Յուլիանոսի երկու տարիներուն մէջ իւր անունը չլսուիր. և անմասն կը մնալ ինքն ալդ ահեղ շփոթութեանց պատմութենէն:

Լոկ քաղաքական պատահարք եկեղեցական պատմութեան շրջանակէն դուրս են, ալլ լետագալ դիպուածներու կապակցութեան համար բաւական լինի լիշել, թէ Արշակ 360-ին Կոստանդի հետ տեսնուեցաւ ի Կեսարիա և բարեկամութիւնը նորոգեց (Ամմ. 139), ալլ յետու դարձեալ երկու պետութիւնները միանգամալն գոր-

ծածել աշխատեցաւ. Յուլիանոսէ հրտման ստացաւ անոր օգնութեան երթալ (Ամմ. 192), ալ օգնութիւն շղկեց (Ամմ. 226), և միանգամայն Պարսից գաւառները աւարեց (Ամմ. 241): Երբ կացութեան դժուարութիւնները ի նկատի առնուին, Արշակալ ընթացքը բացարձակապէս դատապարտելի պէտք չէ նկատուի, թէ պէտք ստորգ ալ է որ վարանոտ ընթացքներ առանց վնասի չեն մնար:

Յուլիանոս յաղթուեցաւ Նասուհէ և սպանուեցաւ 363 յունիս 26-ին. և Յովիանոս պարտեալ բանակի մէջ կայսր ընտրուելով ծանր պայմաններով խաղաղութիւն կնքեց: Մեծ Հայոց Յայնկուստիգրիսեան հինգ գաւառներ, Արզն, Մոկք, Հարեւանդ, Հեր և Կորդուք (Arzanena, Moxoenae, Zahdicena, Hethimena, Corduenae, Ամմ. 240), Պարսից թողուեցան, և Յոյնք յանձնառուեղան ալլ ևս Հայոց չօգնել (Ամմ. 241, Բուզ. 140): Այդ գաշնակցութիւնը որ Հայերը անպաշտպան կը թողուք Պարսից առջև, Արշակալ սպասածը չէր, և Պարսից երկիւղը զօրացած ատեն նորէն Յունաց հովանաւորութիւնը որոնելու հարկ ծագեցաւ:

7. ՆԵՐՍԻՍ Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Պարագալից փոփոխուելով ահա ներսէս նորէն հրապարակի վրայ է. իսկ Զոնակալ անունն իսկ չի շիշուիր. ինչպէս լանկարծ երևեցաւ ալնպէս ալ լանկարծ կը մոռցուի: Արշակ ինքնին ներսէսի ետևէն կերթալ, և զղջական և աղաչական միջոցներով կը հաճեցնէ ոքքաշուած դիրքը թողու և գործոց գլուխ անցնի (Բուզ. 115, Խոր. 66, Վարք 51): Ներսէս կը հաւանի, որովհետեւ իւր յարաբերութիւնք պիտի լինին ուղղափառ Յովիանոսի հետ, և իւր նպատակը պիտի լինի յունա-

կան պաշտպանութիւն պատրաստել պարսկականին դէմ։ Նախ և առաջ նախարարներու համաձայնութիւնն ալ կը պատրաստէ, թագաւոր և կաթողիկոս և նախարարք կը միաբանին և իրարու գործակցելու երդում կընեն։ և միայն Մեհրուժան Արծրունի (Բուզ. 144), և յետոյ Վահան Մամիկոնեան (Բուզ. 164), կամ թէ Մեհրուժան և Վահան ի միասին (Խոր. 68), չեն համաձարներ և սրտով ու հաւատքով Պարսից կողմը կանցնին։

Կորոշուի գեսպանութիւն մը լղել առ կայսրն, և հակառակ յունապարսիկ դաշտանց կայսերական պաշտպանութիւն ինդրել Հայաստանի վրայ. Թերեւս Յովիանոսի երթալու դիտմամբ սկսաւ խորհուրդը, այլ Յովիանոս 7 ամիսէ մեռաւ, և գեսպանութիւնն Վաղէսի ժամանակ հասաւ ի Կոստանդնուպոլիսիս. Ինքն ներսէս գլուխ էր գեսպանութեան, և իրեն հետ այլ ևս 9 (Բուզ. 106), կամ 17 (Վարք, 52) նշանաւոր նախարարներ. թէպէտև յառաջ բերուած անուններուն մէջ շփոթութիւն կը տեսնուի, զի Վարդան Մամիկոնեան կրնայ արդէն սպանեալ նկատուիլ, և Մեհրուժան Արծրունի արդէն հատուածեալ Պարսից կողմը։

Ըստ Բուզանդայ. նախ ներսէս մեծապայծառ փառօք մեծարուեցաւ (Բուզ. 81), Վաղէսի տղան լժշկելու հրաւիրուեցաւ, և ներսէս ուղղափառ դաւանութիւն ընդունելլ պայման դրաւ. այլ տղան մեռաւ (81-90), և Վաղէս աքսորեց զներսէս (91), իսկ նախարարները պատուով Արշակի դարձուց (92), ներսէս 9 տարի մնաց յաքոր (96), և Վաղէսի մահուանէ յետոյ աքսորէ ազտուեցաւ և Հայաստան դարձաւ (112): Արշակ ներսէսի աքսորուելուն վրէժը լուծելու համար Վասակ զօրավարը լղեց, որ 6 տարի Յունաց գաւառները աւերեց (107):

Ըստ պատմչին վարուց. Վաղէս նախ ներսէսը մե-

ծարեց և Կոստանդնուպոլիսոյ պատրիարքէն ալ վեր նըստեցուց (Վարք 53), ալլ Տրայիանոս որդւոյն մահուան պատճառ Ներսէսը Նկատելով նախ բանտարկեց և մեռցնել ուզեց (56), բայց իւր իշխաններուն միջամտութեամբ ուրիշ 72 եկեղեցականաց հետ աքսորեց (57), ուր մնաց Ներսէս 9 ամիս (58), Վաղէս նախարարները պատուով դարձուց (59), ալլ Արշակ Վասակը Յունաց վրայ զրկեց, որ լաղթական հասաւ մինչեւ Խոհեմուպոլիս (60) այժմ Խւսկիւտար, Վաղէս փախաւ և Նեքտառիս պատրիարք հաշտութիւն խօսեցաւ, և Վասակ 8 ամիս արշաւանքէ լետոյ դարձաւ (61), Վաղէս մեռաւ, և Ներսէս տգոտեցաւ, և Կոստանդնուպոլիսոյ ժողովոյն ալ Ներկայ լինելէ լետոյ դարձաւ (62):

Հստ Խորենացուոյ. Ներսէս առաջին դեսպանութիւն մը կատարեց Վաղենտիանոսի օրով, շատ պատիւ գտաւ, և Ողոմպիազարին և պատանդները բերելով դարձաւ (Խոր. 46): Երկրարդ դեսպանութիւն ալ ունեցաւ Վաղէսի օրով, Պապն ու նախարարաց զաւակները պատանդարաւ (66), բայց Վաղէս երեսն ալ տեսնել չուզեց և աքսորեց (68): Մակեդոն պատրիարք միջամտել առաջարկեց՝ եթէ հոգեմարտութեան համաձայնին. Ներսէս մերժեց, ալլ Պապ և պատանդներ համաձայնեցան և ազատուեցան և դարձան (70): Ներսէս ազատուեցաւ Վաղէսի մեռնելէն ետքը, Կոստանդնուպոլիսոյ ժողովոյն ներկայ եղաւ (76), և Արշակալ ձերբակալութենէ ետքը, Թէոդոսի հրամանով Պապը թագաւորեցուց և ի միասին տարաւ (84):

Ալդ երեք տեսակ պատմութիւններն ալ իբր նախնական համարուելուն զատ-զատ քաղեցինք, և յայտնի է որ իրարու հետ չեն կրնար համաձայնիլ, ալլ և իւրաքանչիւրը իւր մէջ այնպիսի ժամանակագրական սխալներ կը պարւնակէ, որ առանց բացատրելու ալ ցարդ յառաջ բե-

բուածներէն կը հասկացուի: Մեք պատմութիւն իւր իրական կերպարանին վերածելու համար ընդունելի և անընդունելի պարագաները զատեմք:

Ներսէս կաթողիկոսութեան մէջ երկու դեսպանութիւն ըրած չէ: Առաջին գեսպանութիւն ըսուածը երիտասարդութեան ատեն Կոստանդնուպոլիս գտնուիլն է, ոչ Վաղենտիխանոս այլ Կոստանդ կալսեր ժամանակ, երբ իբր պալատական Ողոմպիադալի ընկերացաւ և պատանդները դարձուց 350-ին: Բուն և միակ դեսպանութիւնը տեղի ունեցած է 364-ին համաձայն ամեն աղքալին պատմագրաց, թէպէտ արտաքինք լիշտակութիւն չընեն: Թէպէտ դեսպանութեամբ եկող անձի մը աքսորուիլը քաղաքական օրինաց համաձայն չէ, բայց Վաղէսի պէս կալսրէ մը ապօքէն գործ մըն ալ կրնալ սպասուիլ: Միայն Մակեդոն պատրիարքի միջամտութիւնը ժամանակագրութեան չյարմարիր, զի Մակեդոն 360-ին պատրիարքութենէ ելած էր և 361-ին կամ քիչ ետքը մեռած և Վաղէսի հետ ժամանակակից չեղաւ: Կրնալ ընդունուիլ թէ Վաղէս Հայոց դեսպանութեան գլուխը հոգեսոր պետ մը տեսնելով, առաջ պատուով, յետոյ երկիւղիւ, զայն իւր կրօնական տեսութեանց կողմը շահիլ ուզած ըլլալ, և պահ մը աքսորի պէս զայն հեռացուցած ըլլալ: Այլ Վաղէսի Տրալիանոս տղուն հիւանդութեան և մահուան միջադէպները պատմական չեն. Նազիանզացւոյն գրածին համեմատ նմանօրինակ դէպէ մը տեղի ունեցաւ ի Կեսարիա Վաղէսի և Բարսեղի մէջ, Վաղենտիխանոս-Գաղատոս որդւոյն հիւանդութեան և մահուան առթիւ, այլ Բարսեղ աքսորի վճիռը ընդունելէն ետքը աքսորէ ազատեցաւ (Fialon 167, Guérin Բ. 1172, Petin Ա. 369):

Ինը տարի աքսոր մնալը արդէն ոմանց մէջ փոխուած և ինը ամիս ըսուած է, և կերևի թէ պարզ

գրչութեան սխալով մը ամիս եղած է ամս. և եթէ մինչև Վաղէսի մահը աքսոր մնացած ըստմք կը հասնիմք 379 ին, Կոստանդնուպոլսոյ ժողովն ալ տեղի ունեցաւ 381-ին, մինչ Ներսէսի մահը 378-էն լետոյ թողուլ անհնար է. հետեւաբար այդ պատմուած պարագաները պէտք է բոլորովին պատմութենէ գուրս թողուլ: Վասակի հրամանատարութեամք կատարուած Յունաստանի արշաւանքը հաւանական չկրնար լինել, քանի որ Արշակ Յունաց դէմ թշնամութեան նպատակ չունէր, և Ամմիանոս ալ Արշակը օքարեկամ մեր միշտ և հաւատարիմա կը ճանչնալ (Ամմ. 241): Դեսպանութեան հետեւանաց վրայ անորոշ են հասած տեղեկութիւնք. զի գործն ալ անորոշ կերպարան ունեցած է: Վաղէս խոստացած է բերանով, ալլ իրօք ոչինչ կատարած: Խոստմանց վստահանալով Հալք Պարսից հետ թշնամացած են, և Յոլներէն օգնութիւն չհասնելուն համար մենակ և տկար մնացած, որով Արշակալ եղերական վախճանին պատճառ եղած են Յունաց սուտ խոստումները ինչպէս պիտի տեսնեմք:

Պապի պատանդ տարսւելուն պարտգալն կրնալ ընդունուիլ, իբրև հաւատարմութեան նշան և իբրև երաշխաւորութիւն Արշակալ կողմանէ, և Պապին Կոստանդնուպօլսոյ մէջ չպահուիլը իբրև ազատութիւն նկատուած, զի Պապ կալսեր հրամանով նէոկեսարիտ զըրկուեցաւ (Ամմ. 283): Մեր տուած թուականները կը ստիպեն ընդունել թէ Պապ որդի է Արշակալ և Ողոմպիտակալ ծնեալ 351-ին, և ոչ Արշակալ և Փառանձեմալ զի յարբունս հասեալ պատանի էր երբ պատանդ տարուեցաւ (Բուդ. 126, Խոր. 66) ինչպէս ըսինք 364-ին, Վաղէսի թագաւորելուն առաջին տարին: Կարուց պատմիչը Պապի եղբայր մըն ալ կուտայ Տրդատ անունով (Վարք 50), և թերեւս այս Տրդատն է որ ի վերջոց

Փառանձեմի հետ կը գտնուի. իսկ Պապին ու Տրդատին Փառանձեմի զաւուկ համարուիլը պղափուց անոր խնամոց ներքեւ մեծցած ըլլալնէն յառաջ եկած է, և մօրուն մօր տեղ անցած է:

Ալդ խորհրդածութիւններէ ետև ահա պատմական պարագալից քաղուածը, Արշակ Յունաց հետ բարեկամութիւնը պնդելու հարկ կը տեսնէ. Ներսէսի հետ կը հաշտուի, նորա ձեռօք նախարարներու հետ ալ կը համաձայնի, Ներսէսը դեսպան կը զրկէ և Պապը պատանդ. Վաղէս գեռպանութիւնը կընդունի սին խոստումներով, Ալս եղելութիւնք 364-ին: Վաղէս Ներսէսի հետ կրօնական խնդրոց ալ կը մտնէ, Ներսէսի անհամաձայնութենէն կը ցաւի, վալրկեան մը բռնութիւն ալ փորձել կը խորհի, բայց վերջապէս Ներսէսը կը դարձնէ խոստումներով, և Պապին ընակութեան տեղ կը սահմանէ Նէոկեսարիա (ալժմ Նիկար) քաղաքը: Ալս վերջին դէպքերն ալ 365-ին: Ներսէս կը դառնալ 9 ամիս բացակալութենէ յետոյ:

8. ԲԱՑԱԿԱՑՈՒԹԵԱՆ ՄԻԶՈՑԻՆ

Ներսէսի բացակալութեան աժեն տեղապահութեան պաշտօնը վարողն եղած է Խադ Կարնեցին, որ յառաջ սարկաւագ էր միայն. և հետզհետէ Բագրեանդալ և Արշարունեաց եպիսկոպոսութեան էր հասած (Խոր. 72, Բուլ. 108): Խադ կատարելապէս Ներսէսի ընթացքին հետեւող սկսած էր համարձակութեամբ յանդիմանել Արշակալ ապօրէն գործերը: Արշակ անոր վրայ կաշառքն ալ փորձեց (Բուլ. 110), սպառնալիքն ալ, բայց Խադ չփոխուեցաւ: Մինչև իսկ քարկոծման փորձ եղաւ Խադալ վրայ, բայց Ապահունեաց նտիսարարագուն երիտասարգներ, Խադալ դստեր տագրներ, պաշտպան կանդ-

նեցան, և զինքը վտանգէ ազատելով իրենց գաւառը տարին (Խոր. 74):

Խագալ համար կը պատմուի թէ իւր ալդչափ անձնուրաց և նախանձախնդիր աշխատութեանց մէջ «զըճնող առ հանդերձս և ձիսսէր» էր (Խոր. 72), առանց սրբութեան և սքանչելագործութեան համբաւը կորուսանելու (Խոր. 72, Բուզ. 111): Իւր հակառակորդներ առիթ տոին աստի զինքը պարսաւել, այլ սուրբը տեղի չտալու համար տարտզը փոխեց, խարազ հագաւ և էշով կը ճանպորդէր: Մեք միալն դիտել կուտամք թէ եկեղեցականաց անշուք տարազը և խստակրօն կեանքը, յատուկ էր ճգնաւորական կենաց հետևողներուն, իսկ աշխարհիկ և ամուսնաւոր եկեղեցականներու, որպիսի ոք էր և Խաղ, արգելեալ չէր վայելչութեան սահմանին մէջ զարդեր և դիւրութիւններ գործածել:

Ներսէսի բացակայութեան Արշակալ և Խաղալ մէջ խնդրու նիւթ եղող գործերուն կարգին կը լիշուի Կամսարականաց կոտորածը: Արշակ նենգութեամք հացկերութի կը հրաւիրէ լԱրմաւիր, բոլոր Արշաւիրի տունը, և ամենն ալ ալնտեղ ջարդել կուտալ, բաց ի Սպանդարատէ, որ ըստ ոմանց Արշակունեաց փեսալ էր (Խոր. 70), և ըստ ալլոց փոքրիկ մանուկ էր (Բուզ. 133): Կամսարականաց մարմիններու թաղումն ալ զլացաւ Արշակ, մինչև իսկ նոյն տօհմին ծառաներէն քանի հատը, որք իրենց տէրերուն մարմինները ի ծածուկ թաղած էին, Արշակալ հրամանով կախաղան հանուեցան (Խոր. 74): Կամսարական ներսէս ալ զինքն այլ ևս ապահով չզգալուն տունով տեղով Յունաստան փախաւ:

Կամսարականաց կոտորածը յատկապէս կը լիշուի, ոչ իրրև միակ, այլ իբր աւելի նշանաւոր, ոբովհետեւ ուրիշ նախարարութեանց մէջ ալ կոտորածներ ընել

տուած էր Արշակ հաշտութենէ առաջ թշնամութեանց վրէժինդրութեան համար (Խոր. 70, Բուզ. 133), Կամսարականաց համար կը լիշուի նաև թէ անոնց Երուանդաշատ քաղաքը և Արտագերից բերդը և առատ ստացուածքն եղան կոտորածին պատճառը (Խոր. 70), Արշակ կոտորածէն ետքը անոնք գրաւեց, Արտագերից բերդը ամբացնել և համբարակել տուաւ, սակայն լետցի նոյն բերդին մէջ լրացաւ Արշակայ տան աղէտքը:

Նշանաւորագոյն է Արշակաւանի պատմութիւնը, զոր Արշակ հիմնեց իւր անունով Կոգովիտ (ալժմ Բալագիդ) գաւառին մէջ, Մասիս լերան ստորոտը: Նոր դաստակերտը շուտով բազմամարդացնելու համար Արշակ զայն ապաստանի քաղաք հռչակեց տմեն տեսակոճրագործաց առանց բացառութեան: Հետևանքն եղաւ երկրին մէջ եղեռանց բազմանալը և անպատիժ մնալը: Էոլոր աշխարհը, մեծամեծք և փոքրունք սկսան բողոքել Արշակալ դէմ. և Խադ արձագանք եղաւ ալդ գանգատանաց Արշակայ առջև, և չուզեց Արշակաւանի մէջ եկեղեցի օծել, պատճառելով թէ իբր պարզ տեղապահ մը անձեռնհաս է ալդ գործը կատարել: Աստի գլխաւորապէս Խագալ առաջարկուած կաշառքները և սպառնացուած քարկոծումը (Բուզ. 110):

9. ԵՐԿՐԻՆ ՎԻՃԱԿԸ

Ալդ մէջոցին Ներսէս Բիւզանդիոնէ դարձաւ և ամեն խրատ և յորդոր գործածեց, որպէս զի Արշակաւանի կացութիւնը փոխել տալ և օրինաւոր քաղաքի դիրքին մտցնէ, և Արշակաւանի բնակիչներուն ամեն օրէնքէ և պատիժէ ազատ լինելուն արտօնութիւնը ջնջէ: Այլ անհնար եղաւ Արշակը համոզել և Արշակաւան կործանեցաւ, Արշակայ բաղդն ալ ի միասին վտան-

գուեցաւ և ներսէսի անիծակուր սպառնալիքներ կատարուեցան։ Ներսէսի լուսաբեկ և սպառնալից վերջին անգամ Արշակէ զատուելէն երեք օր լետոյ, չարակեղ կամ ժանդ կոչուած ժանտախտը սկսաւ Արշակուանի մէջ ճարակել և երեք օրուան մէջ 18,000 կամ 20,000 երդ (Վարք 65, Բուզ. 115), որ է իբր 70—80,000 հոգի սպառնեց և քաղաքը «քանդեցաւ» (Բուզ. 115), որ Վարքին մէջ երկրաշարժի պարտգալն աւելցնելու առիթ եղած կերեսի (Վարք 65)։ Իսկ ըստ Խորենացւոյ նախարարք լարձակեցան և Արշակուանը կործանեցին (Խոր. 60)։ Գուցէ թշնամական փորձ մըն ալ եղաւ նախարարաց կողմանէ, ալլ առաւել հաւանական է ժանտախտը ալսպիսի տպականեալ և խառնակեաց քաղաքի մէջ։ Խորենացւոյ պատմութեան մէջ գերեաց մանուկները ազստելու մարդասիրական գործը կը վերագրուի ներսէսի, որ հասասարապէս ժանտախտի առթին մէջ ալ որբերուն վրայ կընալ գործադրուած ըլլալ։

Արշակուանի շինութեան և կործանման պարագալք անորոշ են պատմութեանց մէջ և ըստ դիպաց յետ կամ լառաջ զետեղուած են. բայց պատմուած պարագալք զայն ներսէսի բացակայութեան միջոցին կը կտպեն։ Միւս կողմանէ Արշակուանի կեանքը երկար չեղաւ, եթէ մէջը եկեղեցի օծելու իսկ ժամանակ չեղաւ։ Բնակչաց թուոյն քիչ ժամանակի մէջ շատցած ըլլալը, պատժական օրէնքներուն իսպառ դադարման բնական հետևանքն է։ Հետևաբար 364-է 365, կամ առ առաւելն 364-է 366 տարիներու մէջ սկսած և վերջացած է չարագուշակ Արշակուանը, որոյ անունը մինչև ալսօր մեր հասարակ խօսից մէջ Սոդոմ.Գոմորի համանշանակ իմաստով կը գործածուի։

Արշակուանի պատճառով թագաւորի և կաթողիկոսի և նախարարներու մէջ ճագած խնդիրը երկարա-

տե չեղաւ, զի հասարակաց վտանգը ամենքը համաձայնելու կը ստիպէր: Նապուհ միջոց մը հանդարտ մնալէ յետոյ նորէն Հալաստանը գրաւելու փորձերու ձեռնարկեց. անախ բազմադիմի արուեստիւք նենգութեան, ապա թեթևակի վնասիւք զընդդիմութիւն համօրէն ազգին ընկճել փորձէր. և ի նախարարաց և ի մեծամեծաց զումանս հրապուրանօք և զալս լեղակարծում լարձակմամբ լինքն նուաճէր (Ամմ. 282): Արշակ և նախարարք չէին կընար հարկաւ սիրով մտնել Պարսից լուծին ներքեւ, ներսէս իւր դեսպանութենէն լոկ խոստման խօսքեր բերեր էր, հարկ եղաւ պաշտպանողական պատրաստութիւններու ձեռնարկել, Վասակ սպարապետ էր, ալլ ներսէս էր ամենուն համաձայնութեան և քաջալերութեան կեդրոնն ու աղբէւրը:

Յիշեցինք արդէն Մեհրուժանալ և Վահանալ սըըտով ու հաւատքով Պարսից կողմն անցնելը: Երկու ուրացեալ հայ նախարարներ Ամմիանոս ալ կը լիշէ Կիւլաքս և Արտաւան անունով: Թէպէտ և մեր պատմագիրներ ուրացեալները իրենց հին անուններով սովորեն լիշել, սակայն հարկաւ կրօնափոխութեան հետ անուանափոխութիւն ալ տեղի ունեցած պէտք էր ըլլար: Ամմիանոս կգրէ, թէ զմին ի սոցանէ լառաջագործ հագարապետ աշխարհին և զմիւսն սպարապետ զօրաց լեալ ասենա (Ամմ. 282), որ Արծրունեաց և Մամիկոնեսնց բնական պաշտօններուն կը համապատասխանէ:

Պարսից և Հալոց պատերազմներուն նկատմամբ չեմք կարող հետեւել Բուզանդալ դիցաբանութեանց. ոչ պատերազմաց թիւը, ոչ բանակաց բազմութիւնը, և ոչ կոտորածոց քանակութիւնը ճշգելու չեմք զբաղիր, մանաւանդ որ նիւթն ալ մեր նպատակէն դուրս է: Յիշեմք միայն Դարանաղի գաւառոին Հանի բերդին (այժմ Կամախ) թագաւորական գերեզմաններուն բռնարա-

րուիլը, և կողոպտուած ոսկրներուն Վասակալ ձեռօք ետ առնուիլը, այլ հեթանոս և քրիստոնեալ թագաւորաց ոսկրներուն խառնուած լինելուն համար Վաղարշապատու սրբավալիրին մէջ չթաղուիլը, այլ Արագածոտն գաւառի Աղջք գիւղը յատուկ տեղ մը թաղուիլը (Բուզ. 148, Խոր. 60), թերեւս Տիրանալ ոսկերաց մօտ, որ սպանուած էր ի Կուաշ, նոյն Արագածոտն գաւառի մէջ:

Պատերազմները երկարեցան, և հակառակ ներսէսի ջանքերուն, նախարարք՝ իբր թէ լոգնած և տկարացած, այլ իբրօք Պարսից նենդութենէն շահուելով, չեն ուզեր այլ ևս պատերազմի ելնել Արդ շարժման գլուխ կը կանգնեն Աղձնեաց և Գուգարաց բգեշխներ, որոնք Խոսրով Կոտակի ատենն ալ 337-ին, նոյնպէս թագաւորին դէմ ելած էին: Ըստ պատմութեան 34 տարի է որ պատերազմը կը շարունակէ (Բուզ. 163), և նախարարաց բերնով կըսուի թէ 30 տարի է որ Արշակ թագաւորած է, և բնաւ տարի մը առանց պատերազմի անցած չէ (Բուզ. 165): Ցիշուած թիւերը ճիշտ չեն, այլ ներսէսի 34 և Արշակալ 30 ենթադրեալ տարիներու հետ կը համաձայնին, իսկ 30 տարի պատերազմ ենթադրելու համար, պէտք է 337-է սկսել, որ յունապարսիկ 40-ամեայ խաղաղութեան լրանալուն տարին, և ճիշտ կը հասնի Արշակալ վերջին ալսինքն 367 տարին:

Նախարարաց ներքին միտումն է քաղաքականութիւնը փոխել և Պարսից հովանաւորութեան ներքե մտնելով խաղաղութեամբ ապրել, Յովկանոսի դաշամբ Յոյներ պաշտօնապէս ձեռնթափ եղած էին, Վաղէսէ խոստացուած օդնութիւններ չէին հասներ, Զայք որչափ ալ ըստ պատմութեան յաղթականք, այլ հնար չէր որ մեծամեծ կորուստներ ունեցած չլինէին: Նախարարք ալդ իրենց կարծիքը կը ներկալեն ներսէսի,

որ արքունեաց մէջ հալրապետական ազդեցիկ գերը կը վարէր ըստ ամենալինի. Ներսէս չհաւաներ. և կրօնական ու քաղաքական, մարդասիրուկան և երախտագիտական ամեն փաստեր կը գործածէ նախարարները իրենց խորհուրդէն ետ կեցնելու, բայց ի զուր. բգեշխներ և իրենց համախոհներ գունդերնին կառնեն և կը ցըռւին (Բուգ. 166):

Պարսից թագաւորն ալ, որուն նախարարաց հետ համաժոռաթիւնը ակներև է, թշնամութիւնները կը գաղրեցնէ, և Ալանազգան Պահլաւունոյն ձեռօք (Խոր. 76) սիրոյ և պատուոյ առաջարկութիւններ կընէ, և կը յորդորէ որ Արշակ անձամբ իրեն գայ, և երկու կողմերու պատուաւոր կերպով խաղաղութիւն կնքեն ուհաստատեն: Արշակ, հարկաւ փաքրիշատէ գործերուն ընթացքին տեղեակ, կը հրաժարի անձամբ երթալ, այլ վերջապէս «թէ կամաւ կամաւ և թէ ոչ կամաւ» (Բուգ. 168) կը ստիպուի հաւանիլ և Վասակ սպարապետի հետ կը ներկայանալ Շապուհին: Բայց հազիւ թէ կը հասնի գործոց ընթացքը կը փոխուի, և Արշակ իբր անհաւատարիմ կը մեղագրուի: Շապուհ, ըստ զրուցաց, մագերու խորհրդով հայ հողի և հայ ջուրի հմալական փորձ մըն ալ կընէ Արշակալ ապագալ արամադրութիւնները իմանալու համար (Բուգ. 169—172), և վերջապէս երկաթեալ (Բուգ. 172, Խոր. 80) կամ թէ արծաթեալ (Ամմ. 282) շղթաներով կը բանտարկէ Արշակը Անլուշ բերդին մէջ, և աչուրներն ոլ կուրցնել կուտաց (Ամմ. 282): Իսկ Վասակ Մամիկոնեասն սպարապետ դատաստանի կենթարկուի, և իւր քաջութեան գործերը համարձակ պաշտպանելոյն վրայ մորթեզերծ կը սպանուի, և խոտով լեցուն մորթը Արշակին կը զրկուի Անլուշ բերդի բանտին մէջ (Բուգ. 173): Ալդ ամենը կը կատարուի յամին 368:

Նախարարք որք կուսակից եղած էին պարսկական բարեկամութեան, շուարեցան ալդ անտկնկալ նենգութեան վրայ, մանաւանդ որ միևնուն ատեն Շապուհ հրաւէր զրկած էր որ թագուհին և նախարարներուն կիները Պարսկաստան երթան (Խոր. 80): Շապուհի զրկած հրաւիրակները նախարարներուն կողմանէ մերժուեցան, և Մուշեղ Մամիկոնեան, Վասարկայ որդին՝ հօրը տեղ սպարապետ հռչակուեցաւ և Ներսէս ալ իւր ազգեցութիւնը ձեռք առաւ (Վարք 67): Փառանձեմ թագուհի Տրդատ տղարով և գանձերով Արտագերից բերդին մէջ ամրացաւ, և Ներսէսի (Խոր. 84) և Մուշեղի (Բուզ. 178) հարկաւ անուններով, որովհետև երկուքին ալ երկիրը թողուլ և երթալը ենթադրելի չէ —, պատգամաւորութիւն լուսեցաւ Վաղէսի որ Պապ արքալորդին թագաւոր դրկէ հանգերձ զօրաւոր օգնութեամբ: Վաղէս միան Պապի դրկեց Տերենտիոս զօրավարին ընկերակցութեամբ, որպէս զի Հայոց պետ լինի, ալլ թագաւորական ձևեր չառնու, որպէս զի ինքն Յովիանոսի դաշանց հակառակ միջամտութիւն ըրած չերևի (Ամմ. 283):

Ալդ միջոցին Շապուհ իւր կողմանէ Հայաստանի վրա լիազօր մտրզպան և հրամանատար անուաներ էր Կիւլաքս և Արտաւան ուրացեալները, որք սկսան մի կողմանէ երկիրը աւերել և միւս կողմանէ Արտագերից բերդը պաշարմամբ նեղել (Ամմ. 282): Հստ Խորենացւոյ Շապուհի անուանած հրամանատարները Մեհրուժան և Վահան ուրացեալներն էին (Խոր. 80), իսկ ըստ Բուզանդալ Հեկ և Կարէն անունով նախարարներ եղած են (Բուզ. 174), և անտարակոյս է որ տարբեր անուններու ներքեւ միւնոյն և ծանօթ երկու ուրացեալ նախարարները կը գտնուին: Իրաւ անգամ մը Բուզանդ անցողաբար չորս անունները միանգամայն կը նշանակէ իբր զատ-զատ անձեր (Բուզ. 182), ալլ տեղ մը միալն

սպրդած շփոթութիւնը չկրնար պատմութեան ընթացքին ցուցած և պահանջած ստուգութիւնը խախտել:

Ալդ կացութենէ յառաջ եկած ներհակընդդէմ գործողութիւնք սկսան երկիրը իսպառ աւերել և կործանել, որովհետեւ երկու կողմերն ալ վնասելու մտադիր էին, առանց բուն նպատակը զօրացնելու: Ալդ վտանգալից պարագաներու մէջ ներսէս քաշուած չէր մնար, ալլ Պարսից դէմ ելնող ազգին գլուխ կանգնած էր, «վերակացու և խրատատու, կարգիչ և առաջնորդ... իմաստութեան իրաց առաջնորդ, հանապազ կցորդ հոգոց, բարձիչ վշտաց աղօթիւք իւրովք, և յամենալինի ամենալիւ երբէք հալր երևեալը (Բուզ. 190):

Ամմիանոս կը պատմէ թէ Կիւլաքս և Արտաւան Արտագերից (Artogerassa) բերդին պաշարման ատեն, ուզեցին խարէութեամբ Հայոց թագուհին գրաւել, ալլ տեսակցութեան ատեն իրենք գրաւուեցան անոր լեզուէն, գաղտնի դաւով Պարսիկները ջարդել տուին և գացին Պապին հետ միացան և ն ամիս հաւատարմութեամբ անոր օգնեցին, բայց Շապուհ նենգաւոր բանակցութեամբ Պապայ միտքը պղտորեց, և Պապ երկուքն ալ սպաննեց և գլուխները Շապուհի լղեց բարեկամութիւն ստանալու լուսով՝ (Ամմ. 283 – 284): Մեր պատմագիրներ Մեհրուժանին և Վահանին գարձի գալը բնաւ չեն լիշեր, ընդհակառակն կը պատմեն թէ Պարսից ծառալութեան մէջ գտնուած ատեննին Հայերէն սպանուեցան: Քանի որ պատահարը պարզապէս ներքին է, և Ամմիանոս հեռուէ հեռու լսածները գրելը կը խոստովանի (Ամմ. 328), և քանի որ Կիւլաքսի և Արտաւանի միենոին Մեհրուժանն ու Վահանը լինելը կը նդունիմք, կը նախադասեմք անոնց վախճանին նկատմամբ ազգային աւանդութիւնը պահել, քան օտար պատմիչին լսած զբոյցը:

Արշակոյ ձերբակալութեան տարին, ալսինքն 368-ին կը սկսին շփոթութիւններ, պատերազմներ, պաշարումներ, որք կը գրաւեն նաև բովանդակ 369 տարուայ ամառան ամիսներ որք ալսալիսի գործերուն սովորական ժամանակն են: Յոյներ եղելութեանց չեն մասնակցեր, բայց տեսնելով Պարսից զօրանալը Արինթէ (Ամմ. 284) կամ Ադդէ (Բուզ. 184, Խոր. 86) զօրավարին հրամանատարութեամբ հսկողութեան բանակ մը կը հանեն: Նոր տարույն, ալսինքն 370-ին, Շապուհ անձամբ պատերազմին գլուխը կանցնի, Պապը 5 ամիս Խաղուեաց կողմերը կը հալածէ, երկրին մեծ մասը և գլխաւոր տեղերը կաւերէ ու կաւարէ, կը գերէ ու կը գերփէ, Արտաշատ, Վաղարշապատ, Երուանդաշատ, Հարենաւան, Հարիշատ, Վան և Նախիջևան կոխան կըլլան (Բուզ. 177, Խոր. 80), Արտագերից բերդն ալ կառնուի, Թագուհին ու գանձեր գերի կը տարուին: Ամմիանոս կը գըէ թէ Արտագերք բուռն զօրութեամբ և փոխադարձ լաղթութիւններով առնուեցաւ (Ամմ. 284), մինչ Խորենացին կըսէ թէ անձնատուր եղան ի կամաց և ոչ ի բռնութենէ (Խոր. 80), իսկ Բուզանդ կը գըէ թէ 11,000 բերդականներ և 6,000 բնակիչներ ամսուան մը մէջ հիւանդութեամբ մեռան (բուզ. 175): Երեքին գրածներն ալ կընան ստոյդ ըլլալ և զերար լրացնել: Իսկ պաշարման տեսողութիւնը 14 ամիս կը դնէ Բուզանդ (Բուզ. 175), և պատմութիւնը դժուարութիւն չկըներ այդ տեսողութիւնը բնդունել, զի աւելի ալ տելու միջոց կալ մինչև 370 տարին:

Ասկէ ետքը Շապուհ բանակցութեան մտաւ Յոյներուն հետ, և երբ չաշողեցաւ, նոր գարնան պատերազմի համար շրջակալ ազգերն ալ նիզակակցութեան կանչեց: Յոյներն ալ պարտաւորուեցան իրենց բանակը զօրացնել հրալիանոս և Վատամար զօրավարներու գուն-

դերով, Հալերն ալ իրենց ոլժերը ժողվեցին Մուշեղալ հրամանատարութեամբ և Պապայ ներկալութեամբ: Յոր ներ պահ մը մեծ պատերազմէ զգուշացան, Հալերուն թողլով մասնաւոր պատերազմներով ատեն վաստկել, այլ վերջապէս անհնար եղաւ խուսափել, և 371 տարուայ ամառուան մէջ կամ վերջ տեղի ունեցաւ Զիրաւայ մեծ ճակատամարտը (Խոր. 86), որ կը կոչուի ևս Բագաւանալ կամ Բագրևանդալ պատերազմ (Բուզ. 196), և նոյն իսկ լատին պատմիչն ալ գիտէ Բագաւանալ (Vagabanta) անունը (Ամմ. 306):

Այս պատերազմին ատենն է Ներսէսի հրաշալի գործակցութիւնը, զոր «մալտակից զինուորական դասուն» բացատրութեամբ լաւերժացուցած է շարականը: Ներսէսն է միաբանութեան կեղրոնը և քաջալերութեան հոգին, կը բարոզէ բոլոր բանակներուն, կօրհնէ զօրավարաց զէնքերը, կօրհնէ զինուորաց եռանդը, և Պապին հետ կը բարձրանալ նպատ լերան վրալ (Ալաշկերտ Ս. Յովհաննէս վանքին գագաթը), Բագաւանալ հանդէպ, ուր տեղէն կը դիտէ «Զիրաւայ (այժմ Դիագինի) ընդարձակ դաշտը և անոր մէջ գործող բանակները, և կաղօթէ անխօնարհելի բազկատարածութեամբ ըստ Մովսիսի՝ Աստուծոյ ժողովրդեան լաղթութեան համար: Սքանչելի աղօթք մը կը դնէ պատմագիրը Ս. Ներսէսի բերանը (Վարք 74—78), արժանի հաւատացելոց սովորական աղօթք լինելու: Ներսէսի աղօթքը, Մուշեղալ քաջութիւնը, զինուորաց եռանդը, և Յունաց զօրաւոր օգնութիւնը, ոչ միայն այն օրուան լաղթութիւնը պատրաստեցին, այլ և շփոթութեանց վերջ դրին և խաղաղութեան օրեր բերին: «Յայնմհետէ խաղաղացաւ երկիրն ընդ ձեռամբ Պապալ նուաճեալ» (Խոր. 90). որովհետև գդագարեաց պատերազմն ի կողմանցն Պարաց և լապահովեցան իրք ճակատուն լայնմ կողմանէ»

(Բուզ. 213): Հատին պատմիչն կը յաւելու թէ երկուց կողմանց հաճութեամբ զինադադար ալ կնքուեցաւ, թէ-պէտ հաստատուն խաղաղութեան դաշնագրութիւն չեղաւ (Ամմ. 306):

Դիպուածոց շաբքը չընդհատելու համար գերելոց բաղդը զանց ըրինք պատմել: Մեհրուժան և Վահան Հալոց երկրին վրայ Եշխանութիւն վարած առեննին, յատսուկ մտադրութիւն դարձուցած էին եպիսկոպոսներ և քահանաներ ձերբակալելու և Պարսկաստան լոելու, և յունարէն և ասորերէն քրիստոնէական գերքերը ալրելու (Խոր. 82), բայց ասկէ աւելի նախարարաց կիները բռնելով բերդերու մէջ կը լեցնէին, անոնց ալրերը հնագանդութեան ստիպելու համար: Միւս կողմանէ ալ կը ստիպէին ալդ կիները քրիստոնէութիւնը ուրանալ և իրենց կամքին ծառալել, և երբ ալդ արիասիրտ կիներ չէին զիջաներ, չարաչար տանջանքներով կը նեղէին և կը մեռցնէին (Բուզ. 183), և կենդանի կամ մեռած բերդերէն վար կը կախէին (Խոր. 84): Մամիկոնեան Համազասպուհւոյ վկալութիւնը մանրամասնօրէն պատմուած է (Բուզ. 183):

Աւերեալ քաղաքներէն հաւաքուած գերիներ, Բուզանդալ թիւերով կը լինին 101,000 տուն Հայեր 95,000 տուն նախկին Նրէաներ (Բուզ. 176—178), որք բովանդակ Պարսկաստան տարուեցան: Նրէից թիւը կամ չափազանցուած է կամ թէ զրչի սփայով աճած է, բայց Հալոց թիւը անհնար չէ: Ալդ գերիներն ալ մասմբ կոտորուեցան և մասամբ հետու տեղեր աքսորուեցան իրենց հաւատոց հաստատութեան համար: Ասսոնց մէջէն Արտաշատ քաղաքի Զուկթա քահանալին վկալութիւնը առանձինն պատմուած է: Նորա մազերուն ճերմակ և մօրուքին տակաւին սև լինելը կախարդական նշան երևցաւ Պարսից աչքին, իսկ ժողովուրդը

հաւատոց հաստատութեան լորդորելը յանցանք սեպուեցաւ Անոր համար ուղեցին առաջ քահանայն հեռացնել (Բուզ. 177), այլ երբ իւր ժողովուրդէն բաժնուկիլ չուզեց, դատարանի առջև հանեցին։ Զուիթա մազերուն և մօրուքին տարբեր գոյները բայատրելու համար ըստ, թէ մազերը մօրուքէն գոնէ 15 տարեկան աւելի ծեր են, բայց ասով քրիստոնէութիւնը ուրանալու ստիպումէն չազատուեցաւ, և յանձն չառնելուն վրայ գըլխատմամբ մարտիրոսացաւ (Բուզ. 180, Խոր. 82):

Իսկ Արշակ թագաւոր Անյուշ բերդին մէջ անձնասպան եղաւ, գործուած անգիտութեանց գոլժէն շուարեալ (Խոր. 82): Դրաստամատ ներքինի, նախկին հաւատարիմն Արշակալ, և լետոյ սիրելի եղած Շապհոյ, իբր անօրինակ շնորհ մը հրաման ընդունեցաւ օր մը ամբողջ միիթարել Արշակը կերակուրներով և զարդարանքներով Անյուշ բերդի անլուր տառապանքներուն մէջ, և նոյն օրն էր որ կերակուրի դանակով մը անձնասպան եղաւ Արշակ, հարկաւ Դրաստամատից լսելով եղելութեանց պատմութիւնը, որովհետև Անյուշի բանտին մէջ լուր անգամ առնուլ անհնար էր։ Դրաստամատ ինքն ալ անձնասպան եղաւ իւր կենաց լոյլտնի վտանգը տեսնելով։ Ալսպէս Բուզանդ (Բուզ. 210-213): Այլ Լատին պատմիչը Արշակալ համար կը գըէ թէ պատամահ անկաւ պատժական երկաթով (Ամմ. 282): Բայց Արշակալ անձնասպան մտհը շատ ծանօթ է մերանոց, և սաւուղական անհնագանգութեան համար սաւուղաբար մեռնելը, իբր աստուածալին պատիժ կը մեկնեն (Վարք 65), մինչ լատին պատմագրին խօսքն ալ շատ որոշ չէ, գրածն ալ հեռուէ հեռու լսածն է։ Այսու հանդերձ մերայինք միշտ խիստ են իրենց պատմութիւններուն և դատաստաններուն մէջ թագաւորաց գէմ, և Ամմիանոսի պատմածը աւելի լար-

մար է պատմութեան ընթացքին։ Սողոմենոս լոյն պատմագիրն ալ յայտնապէս կըսէ թէ Արշակ հաւատոյ նահատակ եղաւ և ուրացութեան չհաւանելուն համար կտտամահ սպանուեցաւ (Կալանոս. Ա. 44)։ Արշակալ մահը հաւանական հաշուով տեղի ունեցաւ 370—371 ձմեռուան մէջ։

Թագուհւոյն մահուան մէջ ալ նմանօրինակ դիտողութեան տեղի կը տեսնեմք։ Ըստ Խորենացւոյ Փառանձեմ սպանուած է յԱսորեստան ունդ սալլացից հանեալը (Խոր. 80)։ Իսկ Բուզանդ կըսէ թէ ազգին նախատինք մը ըլլալու համար, Փառանձեմ բոլոր զօրաց և ժողովրդեան առջև հրապարակ բերուեցաւ, և ժակարդի մէջ ձգուելով պղճութեամբ անարգուեցաւ և սպանուեցաւ (Բուզ. 178)։ Երկուքն ալ ռատակեցինա բառը կը գործածեն Փառանձեմալ համար, իբր իւր չարութեանց արժանաւոր պատիժը գտած։ Սակայն նախարարաց կիներսւն վրալ գործուածը իմանալէն, և Շապուհի ամեծաւ շնորհակալութեամբ Փառանձեմը իւր զօրաց ձեռքէն ընդունելը կարդալէն (Բուզ. 178), և Փառանձեմալ բոլոր հալ կանանց գերազանցը լինելը գիտնալէն ետքը, անհնար է որ Շապուհ հաւատոց և սրբութեան փորձի ենթարկած չլինի դժբաղդ այլ ըլքնաղ թահուհին, և եթէ տակաւին չարաչար մահուամբ սպաննած է զայն, հարկաւ թշուառ թագուհին իւր դիմագրութեամբ հրաւիրած է իւր վրալ Շապուհի անգիտութիւնը։ Փառանձեմալ մահը պէտք է դնել Արշակալ մահէն քիչ յառաջ 370 ի վերջ։

10. ՎԵՐՁԻՆ ԳՈՐԾՆՐ ԵՒ ՄԱՀ

Եղելութեանց և ներսէսի կեանքին դառնալով, մեր նպատակէն դուրս կը նկատեմք երկրին ապահովութեան

Համար Մամիկոնեան Մուշեղ սպարապետին ըրածները պատմել։ Այլ նկատել կուտամք թէ տասնամեալ շարունակ շփոթութեանց միջոցը փակուելուն և խաղաղութեան նշոլներ սկսելուն վրայ, Ներսէս նորէն ձեռք առաւ իւր բարեկարգիչ և շինարար աշխատութիւնները, կործանեալը կանգնել, տապալեալը ուղղել, աւերեալը նորոգել, եկեղեցիները շինել, աղքատներ և ախտաւորներ խնամել, պաշտօնեաները լրացնել, հոգւոց տեսչութիւնը ընդարձակել, և իշխանական հոգածութեան հետևել. ահա Ներսէսի վերջին աշխատանքները, իւր սրտին մօտ ու սիրելի աշխատանքներ (Բուզ. 218):

Այդ զբաղմանց մէջ այլ ևս Ներսէսի մօտ չեմք գտներ իւր հաւատարիմ Խաղը: Վերջին անգամ լիշուեցաւ նա երբ իւր խնամի Ապահունիներու ձեռօք Արշակայ սպառնալիքն ազատեցաւ: Կերևի թէ ծերունին Խաղ այդ լուզման վրայ այլ ևս չկրցաւ կազդուրուիլ, և քիչ ետքը խաղաղութեամբ վախճանեցաւ. և որովհետև քարկոծման վտանգը զինքն ցնցեց, Յալսմաւուրքը քարկոծմամբ նահատակեալ կը գըէ Խաղալ համար: Եկեղեցին նորա լիշտակը կը տօնէ Ներսէսի հետ իմիսին:

Մասնաւոր լիշտակ մը. թէ ոչ ամենայն ստուգութեամբ, գոնեա բաւական հաւանականութեամբ կը ցուցնէ Ներսէսի ընդհանուր եկեղեցւոյ համար ալ տարած հոգածութիւնը: Ա. Բարսեղ 370-ին լաջորդած էր Նւաերիստի լաթոռն Կեսարիոյ և իւր առաջին ջանքը եղած էր Արիանոսաց ազդեցութիւնը կոտրել, որք Վաղէսի պաշտպանութեամբ ուղղափառութեան վրայ կը սպառնալին: Բարսեղ այդ նպատակաւ շատ աշխատեցաւ և շատ գրեց: Իւր թուղթերուն մէջ կայ 32 եպիսկոպոսաց կողմանէ ուղերձ մը առ եպիսկոպոսունս Խոագիոյ և Գաղղիոյ (Բարսեղ. թուղթ. ՂԲ): որպէս զի մի-

ջամտեն և օգնեն Արևելեայց՝ արիանոսութեան դէմ։
Այդ ստորագրութեանց 29-րդն է Ներսէս, և որովհետեւ
այդ 32-ներէն շատեր նշանաւոր անուններ են և բնաւ
մէկն ալ թեմի կոչումը ի միասին չունի, ուստի գըտ-
նուած անունները ժամանակին ականաւոր եալիսկոպո-
սաց կը լատկացուին, և ինչպէս առաջին երեքը՝ Մե-
լիտոս և Եւսեբիոս և Բասիլիոս, իբր Անտիոքյ և
Սամոսատալ և Կեսարիոս նշանաւոր հայրապետները
կը նդունուին, այսպէս ներսէսն ալ իբր Հայոց հայրա-
պետ ընդունուած է օտարներէն (Guerin, Բ. 1168).
Այլք Ներսէսի մօտ եղող Յոււակ անունն ալ Հայոց կը
վերագրեն (Fialon. 121).

Դժուարութիւն կը պատճառէ Ներսէսի անունը
շատ վերջերը տեսնելը, և նորա Կեսարիոս երթարուն-
բնաւ լիշտակ մը չգտնուիլը։ Ուղերձը թուական չունի,
այլ ընդհանրապէս ընդունուած է 372 թուականը
(Guerin. Բ. 1166, Fialon 121) և խաղաղութեան
միջոցին դժուար չէր Ներսէսին Կեսարիոս երթալ. և
այդ առթիւ Կապաղովկիու մեծ կուսակալին հետ ար-
տեսակցի։ Թէպէտ 372 յունուար 6 ին Վաղէս կը գըտ-
նուի ի Կեսարիա (Guerin. Բ. 1171), այլ 372 յունի-
սին կը լիշուի Կապաղովկիու գաւառական ժողով մը
(Guerin Բ. 194, Peltier Ա. 459), և թերևս այդ ժո-
ղովոյն մէջ հիմ զրուեցաւ լիշեալ ուղերձին, և բացա-
կաներու կամ թէ ուշ հասնողներու ստորագրութիւն-
ները հետզհետէ աւելցուեցան. և այս պատճառով Հայոց
Հայրապետին անունը վերջերը մնաց, կամ թէ առաջ
յունական սահմանաց եպիսկոպոսները ստորագրեցին գո-
ւառական համախմբութեամբ. և օտարները վերջը թո-
ղուեցան կամ մնացին։ Թերևս ալ ստորագրող Ներսէսը
որ և է ուրիշ եպիսկոպոս մըն է Պոնտոսի հայրապե-
տական վիճակներէն, քանի որ հարկաւ Հայոց հայրա-

պետն է ըսելու լայտնի և ստորգ նշան մը չկար:

Հանդարտութեան տարիներ խորհրդաւոր եղան ներսէսի հալբապետութեան վերջը ցուցնելու. ինչպէս եղած էր սկզբնաւորութիւնն ալ. 373 թուականը ներսէսի վերջին տարին եղաւ:

Ներսէսի պատմութեան ազգային առաջին գրողներ, բացարձակապէս Պապ Թագաւորի ձեռօք թունաւորուած կըսեն (Խոր. 92, Բուգ. 222, Վարք 85), և անոնց հետևողութեամբ ամեն պատմագիրներ նոյնը կը կրկնեն, Բալց մեք հարկ կը սեպեմք դիտել տալ որ մահուան պարագաներ չեն ստուգեր թունաւորման ենթագրութիւնը, քանի որ ամենայն ինչ գաղտնի եղելութեան մը շուրջը կը դառնալ, այլ ընդհակառակն կը ցուցնեն թէ ներսէս պարզապէս կազմուածոյ տկարութեամբ և հիւծական ախտով և 20 տարի տառապայից հալբապետութեան հետեանօք կանխահար մահուամբ վախճանած է հազիւ 47 տարեկան հասակին մէջ: (Ներսէս Վարժապետեան պատրիարքն ալ 47 տարեկան մերաւ, 1837 – 1884):

Արշակայ և Ողոմպիադայ ամուսնութիւնը 350-ին գնելով, ուստից լառաջ տանել անհնար է, Պապ 351-ին ծնած և 368-ին 17 տարեկան նորահաս պատանի մը կը լինի ի թագաւորելու: Առջի օրէն ահաւոր վասնգը ներու մատնուած և հազիւ Յ տարի ետքը հանդարտութեան երես տեսնել սկսած, և 391-ին 20 տարեկան երիտասարդ մը, խոհական անձ մը չ'ընար ենթագրուել Պապ թագաւորը, մանաւանդ որ լունական երկրին կեանքն ալ զինքն զուարճութեանց և վայելից վարժեցուցած պիտի ըլլար: Երբ թագաւորական աթոռին վրայ հանդարտութիւն և վայելից դիւրութիւն տեսաւ, երիտասարդական անխօրհրդածութեամբ անոնց հետեկի սկսաւ:

Մեր պատմիչք ամեն տեսակ զազրագործութիւններ կը վերագրեն Պապին, զորս գրչի տակ առնուլն ալ աղտեղի է: Բայց որ ամենէն անտանելին է կենթադրեն թէ Փառանձեմ տղան սատանաներու նուիրեց, որք այս պատճառաւ տեսանելի և անտեսանելի կերպերով անկէ չէին բաժնուեր և ուզածնին ընել կուտային անոր: Կախարդասար գաղափարներ և գործեր դարուս մէջ շատ զարգացած էին. Վաղէսի Անտիոք քաղաքի մէջ գործած լիմարութիւնները և լիմարութիւնները բաւական են զայդ հաստատել: Զարմանալի: Է որ նոյն իսկ լատին պատմագրին վկալութեամբ կը հաստատուի այդ. երբ Դանիէլ և Բարզիմեր լոյն գնդապետներ չկրցան Պապը ձերբակալել, ինքզինքնին արդարացուցին ըսելով թէ Պապ կախարդական արհեստին մէջ ունեցած գերազանցութեամբ լածողած էր անտեսանելի մնալ իրենց գունդերուն առջև (Ամմ. 330):

Բայց Պապալ երիտասարդութիւնն ալ բաւական էր, որ Ներսէս զինքն շարունակ խրատէր և լանդիմանէր, և բնական էր որ Պապն ալ սիրով չտանէր եռանդնոտ հալրապետին կծու եպերանքները: Պապ կրնար լաւտնի կամ գաղտնի գանգաժմներ ընել, կրնար հարապետին ալ դիմագրած, ցաւած և ցաւցուցած ըլլալ, մինչև իսկ անոր ձեռքէն աղատելու խօսքեր խօսել, բայց այս կէտէն մինչև թունաւորելու կէտը այնպիսի զիհ մը կայ, որ երկու կէտերը շուտով իրարու չեն գար: Միթէ գժուար էր Պապին՝ խրատողը անարգել և յարաբերութիւնն իզել և Ներսէսը լոեցնել: Ո՞չ ապաքէն Ներսէսի կողմէ լանդիմանութիւնները շարունակելին՝ ակնկալութեան նշոլլ մը տեսնելու արդիւնքն է:

Ուդ միջոցներուն լորս Ներսէսի լանդիմանութիւններն աւելի են և սպառնալիքներ ալ եղած են եկեղեցական տեսակէտով, Պապ զղջման և հաշտու-

թեան ձեռվ և հալրտպետին պաշտպանութիւնը իւր-
վրալ հրտւիրելու գիտմամբ՝ հրաւէր կընէ հալրապե-
տին ի Խախ գիւղ Դարանաղի գաւառին, և մեծահաց
կոչունք կուտալ, պատուոյ տեղը Ներսէսի կուտալ,
մինչև իսկ տարիքին բերմամբ սպասաւորութիւն կընէ,
ոտք կելնէ և արքունական զգեստը թողլով իւր ձեռ-
քով բաժակ կը մատուցանէ Ներսէսի։ Այս բաժակն է
որ բոլոր կասկածներու հիմ եղած է (Բուզ. 222, Վարք.
85):

Պատմութիւնը կըսէ թէ Ներսէս իմացաւ բաժակին-
թունաւոր լինելը, լանդիմանեց թագաւորը և գոհու-
թիւն մատուց Աստուծոյ։ Այլ եթէ Ներսէս իմացած էր
իրօք, աւելի անձնասպանութեան քան թէ առաքինու-
թեան գործ կատարած կըլլալ այն բաժակը խմելով։
Նախարարներէն Մուշեղ և Բագարատ և Համամ և ալլք,
և Ներսէսի աշակերտներէն Մեսրովալ և Տրդատ և ու-
րիշներ, որք ներկայ էին, կրնալին ներել որ Ներսէս
գիտնալով և լալտնելով թունաւոր բաժակը խմէր։ Այս
պարագալք ըստ մեզ ծանրակշիռ են։

Թագաւորին ապարանքէն Ներսէս իւր օթևանը
կուգայ, և ոմանք մինչև Թիլ կը բերեն զինք (Նշան.
23)։ Այստեղ Ներսէս ցոյց կուտալ սրտին վրալ նկանա-
կի չափ կապուտակեալ տեղ մը. և բերնէն երկու ժամ
շարունակ գունտ գունտ արիւն կը հոսի, և երբ իրեն
թիւրակէ և անդեղեալ կը մատուցանեն, կը մերժէ, որ-
պէս զի չապրի և զուտով մեռնի։ Աստ ևս թունաւո-
րուած Ներսէսի վերտպրուած գործեր՝ առաքինութեան
փաստեր չեն։ Հետեւապէս ճշմարտանման չեն։ Այլ լաւ
կը բացարուին երբ ըսուի, թէ Ներսէս ներքին ան-
բուժելի ախտով կը տառապէր, որուն օգուտ չէին
կրնար ընել մատուցուած զեղերը. և ինքն իւր վերջը
եկած և գարմաններուն անպիտան լինելը գիտնալով,

կը մերժէր ուրիշներէ տուանց գիտակցութեան առաջարկուած միջոցները:

Խորենացի շատ համառօտ կանցնի ներսէսի մահուան պատմութիւնը (Խոր. 92), իսկ Բուզանդ բազում ինչ խօսեցաւ կըսէ (Բուզ. 223), և ասկէ առիթ առնով վարուց պատմիչներն ընդարձակ ճառեր կը դնեն մահամերձ հալրապետին բերանը: Հայոց և Յունաց աշխարհներուն ապագային համար ճշտեալ գուշակութիւններ, արևմտեան և արևելեան երկիրներուն ապագայ գիպուածոց լատուկ կանխասացութիւններ, լորս շատ են Խաչակրաց ժամանակին պատկանող ոչ միայն եղելութիւններ, այլ և բառեր և բացատրութիւններ: Ապա կը խօսի նեռին գալստեան և աշխարհի վախճանին և լետին դատաստանին վրալ, օրհնութիւններ կը կարդալ հեռաւորաց և մերձաւորաց: և խրատներ կուտայ շրջակալից:

Անկէ ետքը կելնէ եկեղեցի կիջնէ և անձամբ կը խօսի ողջոյնները, որք ալժմեան քահանալաթաղին մէջ ալ կան, և աթոռին վրալ բազմելով կսկսի օծեր իւղովը, թէպէտ յետոյ օծման խօսք չկալ. եկեղեցիէ դուրս կելնէ և ծիսարանին թաղման ընդարձակ աղօթքը ինքնին կը զրուցէ, և իւր թաղման կարգը ինքն լրացնելով հոգին կաւանդէ: Եթէ ալս ամեն պարագալք ճշտիւ պատմական լինէին, որուն չերաշխաւորեր միայնու վարուց պատմագրին ներբողական ձեւը, դարձեալ աւելի կը մերժէին քան թէ կը հաւաստէին թունաւորուելուն պարագալն:

Մահուան թուականը վարուց պատմիչէն միայն ըստած է Հրոտից ամիս, օր հինգշաբթի (Վարք 112): Մեր տուած 373 թուականին հինգշաբթի կը հանդիպին Հրոտից 5, 12, 19 և 26 օրերը. և աշա Աւգերեան ալ ճառընտիրէ մը քաղելով Հրոտից 5 թուականը

կուտալ, դարձեալ հինգշաբթի օր (Վարք Սրբոց. Գ. 393), և ալս յարմարութիւնը փաստ մըն ալ կը լինի ի նպաստ մեր ժամանակագրութեան: Իսկ Հրոտից 5-ը, Հալոց շարժական տոմարին հաշուով կը լինի 373 լուլիս 25: Կոստանդնուպոլիս տպուած Վարքը կը դնէ նաւասարդի 30, օգոստոսի 29, օր հինգշաբթի (Վարք 202), և թէպէտ օգոստոս 29-ը հինգշաբթիի հանդիպի, սակայն այն օր նաւասարդի 5 կը լինի և ոչ 30: Հին ծաշոցը կը դնէ Տրէ 11, որ շարժական տոմարով կը լինէր դեկտեմբեր 3, իսկ անշարժով կը լինի նոյեմբեր 19, ինչպէս ունին ալժմեան յախմաւուրքներն ալ: Իսկ մեք ամուր կը պահեմք 373 լուլիս 25 թուականը, որ աւելի ստուգութեան երաշխաւորութիւն կընծալէ:

Սրբու հալրապետին մահը տեղի ունեցաւ ի Խախ, ուր կը գտնուէր Պատի հետ տեսնուելու համար: Մարմինը աշակերտաց երիցագունին Տրդատալ հսկողութեամբ և ամենայն հանդիսութեամբ և արքունական շքեղութեամբ, և թագաւորին և ամենայն մեծամեծաց ընկերականութեամբ բերուեցաւ Եկեղեց գաւառի Թիլ աւանը, ի սեփական կալուած Լուսաւորչեան տոհմին: Թորդանի մեծ դամբարանը չտարուելուն պատճառը հարկաւ սրբոյն փափագն եղած է, վաղամեռիկ ամուսնոյն Սանդիստոյ քովը թաղուելու համար:

Լուսաւորչալ ցեղին կալուած եղող տեղերը 15 հատ եղած են ըստ Բուզանդալ (Բուզ. 117), բայց ոչ թէ ամբողջ գաւառներ, այլ պարզ աւաններ իրենց շրջակալ գիւղերով և ագարակներով, որ կրնան կերպով մը գաւառ կոչուած լինել: Ցիշեալ 15-էն միայն 6 հատի գաւառի անունները ունիմք, այսինքն է Ալրարատ, Դարանաղի, Եկեղեց, Տարոն, Բզնունիք և Ծոփք, և ալս վեցէն ալ միայն երեքին աւանները նշանակուած կը

գտնեմք, Թորդան ի Դարանաղի, Թիլ լԵկեղեաց, և
Աշտիշատ ի Տարոն:

Լուսաւորչեան կալուածներ՝ նախկին քրմապետին
կամ գլխաւոր տաճարաց քուրմերուն կալուածներն էին,
որք Տրդատայ ձեռօք Լուսաւորչի տրուեցան, և ամենն
ալ ընտիր և բարեբեր տեղեր էին: Հայր Մարդպետ
անդամ մը ներսէսի ալցելելու առթիւ Ա. տիշատ հան-
դիպած ատեն ալնչափ զմայլեցաւ, որ երբ քիչ մը
գլուխը տաքցուց, սկսաւ Տրդատալ և Արշակունեաց
ազգի և տակի և տոհմի թշնամանել (Բուգ. 117), որ
լաւագոյն տեղեր կանանցահանդերձ մարդկան է տուել,
և կը սպառնալը Արշակայ ձեռքով ետ առնուլ: Բայց
խեղճը նպատակին չհասու, անկէ ելնելուն Շաւասպ
Արծրունիին հանդիպեցաւ, որ իւր ցեղին կոտորուե-
լուն վրէժը լուծելու համար, Մարդպետը մացառուտ
անտառ մը տարաւ, և որսի պատճառանօք նետահար
սպաննեց (Բուգ. 118):

Թիլալ կաթողիկէն, ուր էր ևս ներսէսի գերեզմանը,
կործանեցաւ է. դարուն աւերածոց մէջ, և գերեզմանը
անլայտ մնաց մինչև 1272 փետրուար 1, լորում լայտ-
նուեցաւ Պատուական սարկաւագի ձեռամբ և պատուե-
ցաւ Սարգիս եպիսկոպոսի ձեռօք: Թիլալ կաթողիկէն
նորոգուեցաւ, այլ ոսկրներէն մաս մը Երզնկա տարուե-
ցաւ, և բազուկներէն մին դրուեցաւ Տիրաշէնի վանքը,
որ է ալժմեան Երզնկալի ներսէս Հայրապետի վանքը
Քի գիւղի մօտ: Նշխարաց գիւտի պատմութիւնը գրուած է
Երզնկացի վարդապետէ մը, որ հաւանաբար է նոյն ինքն
Ցովհաննէս Պլուզը, Ա. ներսէսի լատուկ շարականին ալ
հեղինակը: